




Թուրինի գործընթաց-2010

Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում արձանագրված առաջընթացի գնահատում

ՀԱՅԱՍՏԱՆ



Միլենա Կորադինի, Թուրին, սեպտեմբեր 2010թ.

ՆԱԽԱԲԱՆ

«ԹՈՒՐԻՆԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ»

«Թուրինի գործընթաց»-ը մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում իրականացվող քաղաքականության մասնակցային վերազննման մեխանիզմ է, որն սկսել է գործել 2010թ. ԵԿՀ-ի նախաձեռնությամբ՝ մասնակից երկրների շահագրգիռ կողմերի՝ ՄԿՈՒ ոլորտում իրականացվող բարեփոխումները գնահատելու կարողություններն ամրապնդելու նպատակով: Թուրինի գործընթացն իրականացվելու է ԵԿՀ-ի աջակցությամբ բոլոր գործընկեր պետությունների կողմից երկու տարին մեկ անգամ հաճախականությամբ:

«Թուրինի գործընթաց»-ի խնդիրն է ապահովել յուրաքանչյուր երկրում մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտում իրականացվող բարեփոխումների հակիրճ, փաստաթղթերով հիմնավորված վերլուծություն, ներառյալ քաղաքականության հիմնական միտումների, մարտահրավերների, սահմանափակումների, ինչպես նաև առաջավոր փորձի ու հնարավորությունների բացահայտումը: Գործընթացը նպատակ ունի՝

- աջակցել ծանրակշիռ փաստերով հիմնավորված քաղաքականության մշակմանն այդ երկրներում՝ բարելավելով ՄԿՈՒ ոլորտի ներդրումը հարակայուն զարգացման և, մասնավորապես, մրցունակության ու սոցիալական համախմբվածության զարգացման գործում:
- հիմք ծառայել այս երկրներին ԵԿՀ-ի կողմից ցուցաբերվող աջակցության ռազմավարության պլանավորման համար:
- հիմնավորել ԵԿՀ-ի կողմից Եվրոպական Հանձնաժողովին՝ ԵՄ-ից օժանդակություն ստանալու նպատակով ներկայացվող երաշխավորությունները:

Սույն հաշվետվությունը կազմվել է Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և այլ պատկան մարմինների, այդ թվում՝ կրթության և գիտության նախարարության, էկոնոմիկայի նախարարության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, «Ջբաղվածության պետական ծառայություն» գործակալության, Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի, Հայաստանի գործատուների հանրապետական միության հետ սերտ խորհրդակցությունների արդյունքում:

Հաշվետվությունը հիմնված է գործող փաստաթղթերի ուսումնասիրության և ՄԿՈՒ ոլորտի բարեփոխումների գործընթացում ԵԿՀ-ի՝ տարիների ընթացքում շահագրգիռ կողմերի հետ բազմաբնույթ շփումների արդյունքում ձեռք բերած փորձառության և ներգրավվածության վրա: Վիճակագրական տվյալները վերցված են Ազգային վիճակագրական ծառայության համապատասխան հրատարակություններից:

Հաշվետվության նախապատրաստման ընթացքում ԵԿՀ-ին գործուն աջակցություն է ցուցաբերել «Գլոբալ զարգացումներ հիմնադրամը» (Հայաստան):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ԹՈՒՐԻՆԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ»	2
ՀԱԿԻՐԸ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	5
1. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՄԿՈՒ) ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՄԻԼԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՄԱՎԱՐԴԱԿԸ	6
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄԸ	10
2.1 Հայաստանի տնտեսական զարգացումը	10
2.2 Հայաստանի մարդկային կապիտալը	11
2.3. Ձբաղվածությունը Հայաստանում	12
3. ԱՐՏԱՔԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ. ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՄՈՒՄԸ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՒՍՈՒՐՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄԸ	14
3.1. Տարածաշրջանային զարգացման անհամաչափությունը	14
3.2. Ժողովրդագրություն	15
3.3. Միգրացիա	15
3.4. Մեծահասակների ուսումնառություն	16
4. ՄԿՈՒ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ. ՈՒՍՈՒՐՄՆԵՐ, ՈՐԱԿ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	17
5. ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԵՆՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ	22

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՇԱՔ	Աշխատաշուկային միտված ակտիվ քաղաքականություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ՕՈՒՆ	Օտարերկրյա ուղիղ ներդրումներ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՑՈւ	Ցկյանս ուսումնառություն
ԿԳՆ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՄԿՈՒԶԱԿ	ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն
ԱԿԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ՈւԱՀ	Ուսուցման ազգային հիմնադրամ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԿԶԾ	Կայուն զարգացման ծրագիր
ԶՊԾԳ	«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն
ԱԱՌ	Ազգային անվտանգության ռազմավարություն
ՈՔԱԾ	Ոլորտային քաղաքականության աջակցության ծրագիր
ՏԱՄԻՍ	Տեխնիկական աջակցություն ԱՊՀ երկրներին
ԸՊԾ	Ընդհանուր պետական ծախսեր
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ՄԿՈՒ	Մասնագիտական կրթություն և ուսուցում

ՀԱԿԻՐԳ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին տասնամյակում Հայաստանի տնտեսությունը նախկին Խորհրդային Միության երկրների շարքում եղել է ամենաարագ զարգացողներից մեկը: Մինչև գլոբալ ճգնաժամը, որը բացասաբար անդրադարձավ բոլոր մակրոտնտեսական ոլորտների և արտաքին առևտրի վրա, տնտեսական աճը 2008թ. հասել էր ընդհուպ 10%-ի: Քանի որ աճը զգալիորեն կապված էր արտաքին ներդրումների հետ, զբաղվածությունը մնաց ցածր (53%), իսկ գործազրկությունը՝ բարձր մակարդակի վրա՝ կազմելով շուրջ 30% (2008). Տնտեսության վերակառուցումը դեռևս շարունակվում է, ինչը կառաջացնի հմտությունների պահանջ:

Լինելով բնական պաշարների տեսանկյունից աղքատ երկիր է, որը համեմատաբար մեկուսացված է հարևան հիմնական շուկաներից, Հայաստանի կրթված և ձեռնարկատիրական ջիղ ունեցող աշխատուժը և պոտենցիալ աջակցությունը Սփյուռքից սովորաբար դիտվում են որպես Հայաստանի հիմնական մրցակցային առավելությունները:

Վերջին տասնամյակում, թեև կրթությունն ընդհանուր առմամբ և բարձրագույն կրթությունը մասնավորապես որոշակի քաղաքական ուշադրության արժանացան և ստացան ռեսուրսներ, սակայն մասնագիտական կրթությունը և ուսուցումը (ՄԿՈՒ) գերակայություն չէին, և այս ոլորտի բարեփոխումները պայմանավորված էին հիմնականում դոնորների աջակցությամբ: Միայն վերջերս ընդունվեցին մի շարք ազգային քաղաքական փաստաթղթեր, որոնք վերաբերում են սկզբնական ՄԿՈՒ-ին, ցկյանս ուսումնառությանը և սոցիալական գործընկերությանը: Շահագրգիռ կողմերի տեսանկյունից ՄԿՈՒ-ն ընդգրկում է ինչպես սկզբնական (հիմնական), այնպես էլ շարունակական ՄԿՈՒ և կապված է մրցունակության օրակարգի ու ՄԿՈՒ համակարգի ամբողջական արդիականացման հետ: Գործատուների կազմակերպությունները, մասնավորապես, ցանկանում են, որ ՄԿՈՒ համակարգը սակավ ակադեմիական լինի և առավել համապատասխանի ընկերությունների պահանջներին: Այս **տեսիլը** քաղաքականության միջոցառումների վերածելու ռազմավարական մեխանիզմներ առ այսօր գոյություն չունեն: Այնուամենայնիվ, խոստումնալից է ՄԿՈՒ ոլորտում համագործակցության մասին Փոխըմբռնման հուշագիրը, որը վերջերս ստորագրվեց ՀՀ կրթության և գիտության նախարարության ու սոցիալական գործընկերների կողմից (2009):

Սոցիալական գործընկերները նույնպես հաստատում են, որ վերջին տարիներին գրանցվել է որոշակի առաջընթաց ՄԿՈՒ-ն առավել գրավիչ դարձնելու և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ, մասնավորապես հաստատությունների կառավարման խորհուրդներում նրանց ընդգրկվածության միջոցով:

Հայաստանի ՄԿՈՒ համակարգի ներկայիս մարտահրավերները բազմաթիվ են և հիմնականում ժառանգված Խորհրդային տարիներից.

- ՄԿՈՒ-ն շարունակում է միջնակարգ և բարձրագույն կրթության համամասնությամբ **սակավ գրավիչ տարրերակ** դիտվել: Այն ընկալում էր, որպես կրթության «երկրորդ հնարավորություն» սակավ «արտոնյալ» աշակերտների համար, ովքեր չունեին այլ ընտրություն, քան ընդգրկվել «փակուղի տանող» այս կրթության մեջ, որը հնարավորություն չէր ընձեռում ընդունվել համալսարան կամ գրավիչ աշխատանք գտնել: Տեսականորեն հնարավոր է անցում կատարել նախնական և միջին մասնագիտական կրթությունից բարձրագույն կրթություն, սակայն գործնականում, թեև միջին մասնագիտական կրթությունը մեկ տարի ավելի է պահանջում, քան միջնակարգ կրթությունը, այնուամենայնիվ առանց մասնավոր կրկնուսույցների օժանդակության գործնականում անհնար է հանձնել բուհերի ընդունելության քննությունները, և համեստ եկամուտներ ունեցող ընտանիքների երեխաները չեն կարող դա իրենց թույլ տալ:
- **ՄԿՈՒ ենթակառուցվածքը** շատ թույլ է զարգացած և աղեկվատ չէ վերջին ժամանակաշրջանում ՄԿՈՒ-ին տրամադրված ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով: Հաստատությունների ֆիզիկական վիճակը (շենքեր, նյութական բազա) չի ապահովում ուսումնառության համար անհրաժեշտ պայմաններ և որոշ դեպքերում անգամ սպառնում է

ուսանողների անվտանգությանը: Դեռ ավելին, առկա է ահռելի անհամաչափություն հանրակրթական դպրոցների և ՄԿՈՒ հաստատությունների իմիջը, որը նույնպես խիստ բացասաբար անդրադառնում ՄԿՈՒ գրավչության վրա: ԵՄ-ն 2006 թվականից սկսել է զբաղվել այս խնդրով Ոլորտային քաղաքականության ծրագրի միջոցով, որը ներառում է նաև հաստատությունների շենքերի վերանորոգում և գույքի տրամադրում: Այնուամենայնիվ այս բնագավառում դեռևս չափազանց շատ անելիքներ կան:

- **ՄԿՈՒ իրականացման ցածր որակը** բոլոր շահագրգիռ կողմերի մտահոգության առարկան է: Սա ներառում է խնդիրների լայն շրջանակ՝ հնացած ուսումնական պլաններից ու ուսումնառության նյութերից մինչև դասավանդման ցածր որակ, սակայն նաև՝ մասնագիտական կողմնորոշման ու խորհրդատվության անբավարարություն, որն ապագայում ավելի լուրջ միջամտության թիրախ պետք է դառնա: ԵՄ-ի միջոցով մի քանի մասնագիտությունների համար մշակվել են նոր ուսումնական պլաններ, որոնք 2010/11 ուսումնական տարվանից կփորձարկվեն ՄԿՈՒ հաստատությունների մեծ մասում: ԿԳՆ-ն պետք է մանրակրկիտ մոնիթորինգի ենթարկի այս գործընթացը և հետագա գործողությունների պլան մշակի:
- **ՄԿՈՒ-ի նկատմամբ պատասխանատվությունը և (տեղական) ֆինանսական միջոցների հատկացումը** մնում են Հայաստանի ՄԿՈՒ համակարգի արդյունավետ ու կայուն բարեփոխումների երկու կարևորագույն մարտահրավերները: Միջազգային փորձագետների օժանդակությամբ մշակված ՄԿՈՒ քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը պետք է տեղական քաղաքականություն մշակողների «սեփականությունը» դառնան, պետք է հատկացվեն բավարար ֆինանսական ռեսուրսներ դրանց կենսագործման համար: Նոր նախաձեռնությունների փորձարկումը կպահանջի հզոր միջինատիտուցիոնալ համագործակցություն և, չնայած արտաքին ռեսուրսների անհրաժեշտության, նաև՝ տեղական ռեսուրսների մոբիլիզացում բարեփոխումները տարածելու և կայուն դարձնելու նպատակով:

ԵԿՅ-ն ՄԿՈՒ բարեփոխումների ոլորտում ակտիվորեն համագործակցում է ինչպես Հայաստանում ԵՄ պատվիրակության, այնպես էլ Հայաստանի իշխանությունների հետ և օժանդակություն է տրամադրել քաղաքականության աջակցման ծրագրերի մշակմանն ու պիլոտային գործողությունների իրականացմանը:

Հայաստանում Թուրքիի գործընթացը գնահատել է ՄԿՈՒ բարեփոխումների առաջընթացը, որոշարկել է ԵԿՅ և Հայաստանի իշխանությունների միջև համագործակցության գերակա բնագավառները և առաջարկել է հետագա տարիների օրակարգը:

Այս օրակարգը լրացնում է ԵՄ ՈՔԱԾ-ով նախատեսված գործողությունները և ներառում է ՄԿՈՒ ֆինանսավորման, ՄԿՈՒ կառավարման, սոցիալական գործընկերության մեծահասակների կրթության բնագավառները:

1. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՄԿՈՒ) ՀԱՍՎԱՐԳԻ ՏԵՍԻՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՍԱԿԱՐԴԱԿԸ

Վերջին տասնամյակում կրթությունը՝ որպես գերակա ոլորտ, հետևողական ուշադրության է արժանացել Հայաստանի Հանրապետությունում ընդունված բոլոր ռազմավարական փաստաթղթերում: Մարդկային կապիտալը Հայաստանի հիմնական հարստությունն է, և հետագա հետևողական ներդրումները մարդկային ռեսուրսների զարգացման ոլորտում ճանաչվել է որպես ազգային քաղաքականությունների առաջնահերթ գերակայություն:

Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման ուղղություններն ու գերակայությունները սահմանող երկու հիմնարար փաստաթղթերն են «Ազգային անվտանգության ռազմավարությունը» (ԱԱՈ), որը հաստատվել է ՀՀ Նախագահի կողմից 2007թ. փետրվարին, և «Կայուն զարգացման ծրագիրը» (ԿԶԾ), որը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2008թ. հոկտեմբերին և գործելու է մինչև 2021թ.:

ԱՎՌ-ն, որը սահմանում է ազգային անվտանգության հիմնարար արժեքները և բոլոր ոլորտներում դրանց ապահովման գործոններն ու գործողությունները, որպես ազգային անվտանգության սպառնալիքներ է դիտում՝ (i) գիտակրթական համակարգի կառավարման անարդյունավետությունը, (ii) միջազգային ներգրավվածության ոչ բավարար մակարդակը, (iii) ինչպես նաև յուրաքանչյուրի համար մասնագիտական կրթության ոչ լիարժեք մատչելիությունը: Այսպիսով, Հայաստանում կրթության համակարգի ներդաշնակ զարգացումը հռչակվել է որպես Հայաստանի կարևորագույն գերակայություն:

ԿԶԾ-ն աղքատության հաղթահարման համատեքստում առաջ քաշվող առաջնային նպատակների, թիրախների և գերակայությունների շարքում փաստաթուղթն առանձնացնում է սոցիալական ծառայությունների, հատկապես՝ կրթության և առողջապահության ոլորտներում ներդրումները մեծացնելու անհրաժեշտությունը՝ դրանց արդյունավետության և մատչելիության ավելացման միջոցով: Այս նպատակին հնարավոր կլինի հասնել համախմբված բյուջեի՝ կրթությանը հատկացվող ծախսերի մասնաբաժնի մեծացման միջոցով, որն ակնկալվում է, որ մինչև 2015թ. կհասնի 4%-ի, իսկ մինչև 2021թ.՝ 4.5%-ի՝ այնուամենայնիվ բավականին ցածր մնալով ԵՄ միջինից, որը կազմում է 5%:

ԿԶԾ-ում հիշատակվում է նաև մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող քաղաքականությունը: Մրցակցային և առավել որակյալ կրթություն ապահովելու և աղքատների ու քաղաքային կենտրոններից հեռու ապրող երիտասարդների ընդունելությունը մեծացնելու անհրաժեշտությունը ներկայացվում է որպես գերակայություն՝ նպատակ ունենալով մեղմել տարբեր սոցիալական խմբերի համար կրթության մատչելիության անհավասարությունը:

Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) համակարգը Հայաստանում բնութագրվում է երկու տարբեր մակարդակներով՝

- «նախնական մակարդակ», որի նպատակն է կրթության պարտադիր փուլն անցած երիտասարդներին աշխատանքային որակավորումներ ստանալու համար անհրաժեշտ ուսուցում տրամադրել, և
- միջին ՄԿՈՒ որակավորումներ այն երիտասարդների համար, ովքեր ստացել են եռամյա ընդհանուր միջնակարգ կրթություն¹ կամ ստացել են պարտադիր հանրակրթություն: Միջին ՄԿՈՒ-ն թույլ է տալիս երիտասարդներին վերահսկել աշխատակազմեր և կառավարել արտադրական գործընթացներ ու ծառայություններ (ի տարբերություն բանվորական/արհեստագործական խնդիրների ու գործառույթների կատարման):

Միջին ՄԿՈՒ-ն կրթության կենսունակ հետագիծ է այն երիտասարդների համար, ովքեր նպատակադրվել են ճանաչման արժանանալ հասարակության մեջ: Միջին ՄԿՈՒ ծրագրեր իրականացվում են նաև երեք համալսարաններում: 2001թ. ընդունված բարեփոխումների համաձայն, միջին ՄԿՈՒ իրականացնող քոլեջները կարող են առաջարկեն նաև նախնական ՄԿՈՒ ծրագրեր, և ներկայում շուրջ 15 քոլեջներ առաջարկում են նմանօրինակ ծրագրեր: Նրանք, ովքեր պարտադիր հանրակրթությունից հետո են ընդունվում այդ հաստատություններ, նախնական և միջին ՄԿՈՒ-ն առաջարկում է ստանալ ինչպես մասնագիտական որակավորում, այնպես էլ միջնակարգ ընդհանուր կրթության վկայական (ավարտական ատեստատ), ինչը նաև բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն է ընձեռում: Մասնագիտական կրթության նշված երկու ենթահամակարգերով սովորողների առաջխաղացումը կապող հետազոծերը, սակայն, չեն խթանվում՝ չնայած այն հանգամանքին, որ միջին ՄԿՈՒ հաստատությունները կարող են շնորհիվ նաև արհեստագործական դիպլոմների: Օրենսդրությամբ նախատեսված է, որ բարձր առաջադիմություն ցուցաբերող միջին ՄԿՈՒ շրջանավարտները հնարավորություն ունեն շարունակել իրենց ուսումը բուհերի երկրորդ և երրորդ կուրսերում, և 2006թ. ի վեր գրեթե բոլոր քոլեջների սովորողների շուրջ 10%-ն օգտվում են այս իրավունքից:

¹ Մինչև 2002թ. Հայաստանում հանրակրթության տևողությունը 10 տարի էր՝ ներառյալ միջնակարգ կրթության երկու տարիները: 2002թ. ընդունվեց 11-ամյա հանրակրթություն՝ ներառյալ միջնակարգ կրթության երկու տարիները, այնուհետև՝ 2006թ., ներդրվեց 12-ամյա հանրակրթություն՝ ներառյալ միջնակարգ կրթության երեք տարիները:

ՄԿՈՒ համակարգը գործառնում է տարբեր նախարարությունների ներքո, սակայն ուսումնական ծրագրերի և ուսումնառության արդյունքների ընդհանուր համակարգումը վերապահված է ՀՀ կրթության և գիտության նախարարությանը (ԿԳՆ): 2008-2009 ուսումնական տարում նախնական ՄԿՈՒ ընդունվել է հիմնական ընդհանուր կրթություն ստացածների 5%-ը, իսկ միջին ՄԿՈՒ` 21%: Նախնական ՄԿՈՒ-ն գերազանցապես անվճար է, իսկ միջին ՄԿՈՒ-ն ֆինանսավորվում է հետևյալ համամասնությամբ` 25% պետության կողմից` անվճար տեղերի հատկացման միջոցով, և 75% սովորողների կողմից` ուսման վճարների միջոցով:

90-ականներին կրթությանը հատկացվող ռեսուրսների սահմանափակության պատճառով կրթության մասին նոր օրենքի ընդունումից հետո (1999թ.) նախնական ՄԿՈՒ-ն ըստ էության կասեցվեց և ձևափոխվեց կամ ձուլվեց ընդհանուր միջնակարգ դպրոցների հետ, որոնք որոշ ժամանակ պահպանում էին մասնագիտական հոսքերը, սակայն չէին տրամադրում ՄԿՈՒ որևէ որակավորում: 2004թ. նախնական ՄԿՈՒ-ն վերականգնվեց:

2006թ. տվյալներով, ՄԿՈՒ համակարգը Հայաստանում ներառում էր «նախնական ՄԿՈՒ» 28 հաստատություն (արհեստագործական ուսումնարաններ), «միջին ՄԿՈՒ» 81 պետական և 23 մասնավոր հաստատություն և միջին ՄԿՈՒ ծրագրեր առաջարկող 3 համալսարան:

Մասնավոր ՄԿՈՒ հաստատություններում սովորողների թիվը 2005թ. հետո նվազման միտում է ցուցաբերել. եթե 2005թ. այն կազմում էր 2.982, ապա 2009-ին արձանագրվել է 2.171 թիվը: Նույն ժամանակահատվածում այդօրինակ հաստատությունների թիվը նույնպես կրճատվել է` 28-ից հասնելով 23-ի: Սա կարելի է բացատրել այն փաստով, որ մասնավոր ՄԿՈՒ հաստատությունները լիազորված չեն շնորհել «պետական մոնոլի» դիպլոմ, որը ճանաչվում է ամբողջ երկրում:

Միջին ՄԿՈՒ հաստատություններում անվճար տեղերի համար ընդունելության քննություններն անցկացվում են մրցութային հիմունքներով, իսկ վճարովի տեղերի համար ընդունելության քննություններն հանձնելու պահանջը բացակայում է:

Խորհրդային տարիներից ժառանգված ՄԿՈՒ-ն սակավ գրավիչ էր, քան միջնակարգ և բարձրագույն կրթությունը: ՄԿՈՒ-ն համատարած ընկալում էին, որպես կրթության «երկրորդ հնարավորություն» սակավ «արտոնյալ» աշակերտների համար, ովքեր չունեին այլ ընտրություն, քան ընդգրկվել «փակուղի տանող» այս կրթության մեջ, որը հնարավորություն չէր ընձեռում ընդունվել համալսարան կամ գրավիչ աշխատանք գտնել: Տեսականորեն հնարավոր է անցում կատարել նախնական և միջին մասնագիտական կրթությունից բարձրագույն կրթություն, սակայն գործնականում, թեև միջին մասնագիտական կրթությունը մեկ տարի ավելի է պահանջում, քան միջնակարգ կրթությունը, այնուամենայնիվ առանց մասնավոր կրկնուսույցների օժանդակության գործնականում անհնար է հանձնել բուհերի ընդունելության քննությունները, և համեստ եկամուտներ ունեցող ընտանիքների երեխաները չեն կարող դա իրենց թույլ տալ:

2004թ. սկսած մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի բարեփոխումները` ոգեշնչված ԵՄ-ի` զբաղվածության և հմտությունների հիմնախնդիրներին նպատակաուղղված քաղաքականությամբ, ավելի կարևոր տեղ են զբաղեցրել համապետական օրակարգում և զգալի ուշադրության են արժանացել դոնորների, մասնավորապես ԵՄ կողմից` բյուջետային աջակցության միջոցով: 2004թ. Հայաստանը ԵՄ ՏԱՍԻՍ ծրագրի օժանդակությամբ ներգրավվեց մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի բարեփոխումների և արդիականացման գործընթացի մեջ: ՄԿՈՒ մասին օրենքը մշակվեց այս ծրագրի իրականացման ընթացքում և ընդունվեց 2005թ. հուլիսին: ՄԿՈՒ մասին օրենքով նախատեսվեցին մի շարք նոր տարրեր, այդ թվում` որակի գնահատում և որակի երաշխավորում, հաստատությունների կառավարման նոր մարմին (ուսումնարանի/քոլեջի խորհուրդ), կրեդիտային համակարգ և սոցիալական գործընկերություն:

Ծրագիրը նպաստեց նաև պիլոտային հաստատություններում մոդուլային ուսումնական ծրագրերի իրականացմանը, այդ հաստատություններին սարքավորումների տրամադրմանը, դասավանդողների

վերապատրաստմանը և «ՄԿՈՒ արդիականացման գերակայությունները և 2005-2008թթ. գործողությունների պլանը» ներկայացնող փաստաթղթի ընդունմանը:

Անցած տարիներին ԵՄ-ն հետևողականորեն աջակցություն է ցուցաբերել բարեփոխումների գործընթացին՝ նպատակ ունենալով խրախուսել Զայաստանի կառավարության՝ ՄԿՈՒ համակարգի որակի և գրավչության բարելավման ջանքերը: 2006-ից 2009թ. ընկած ժամանակահատվածում ԵՄ-ն ուղորտային քաղաքականության աջակցության ծրագրերի միջոցով տրամադրել է 34,5 միլիոն եվրոյի չափով դրամաշնորհներ: Այս ծրագրերը խթանել են պետական միջոցների հատկացումը ուսումնական հաստատությունների շենքերի վերանորոգման, սարքավորումների մատակարարման, չափորոշիչների և ուսումնական ծրագրերի մշակման և դասավանդողների վերապատրաստման աշխատանքներին: Վերանայված ուսումնական ծրագրերի առաջին ցիկլը 78 արհեստագործական ուսումնարաններում և միջին մասնագիտական քոլեջներում ներդրվելու է առաջին կուրսում՝ սկսած 2010-2011 ուսումնական տարուց (յուրաքանչյուր հաստատությունում՝ առնվազն մեկ մասնագիտության գծով): Այս ծրագրերի արդյունավետությունը հնարավոր չի լինի գնահատել մինչև 2014-2015 ուսումնական տարին: Բարեփոխումների տարբեր փուլերի միջև եղած երկար դադարը բացատրվում է այն փաստով, որ Կառավարությունը, չնայած իր քաղաքական դիրքորոշման և մի շարք առանցքային ռազմավարական փաստաթղթերի ընդունման, շարունակում է բյուջետային միջոցներն ուղղել է գերազանցապես հանրակրթության արդիականացմանը, և միայն դոնորների օժանդակություն շնորհիվ է, որ ՄԿՈՒ համակարգը նույնպես արժանացել է ուշադրության: Սա արտացոլված է ԶԶ ֆինանսների նախարարության դիրքորոշման մեջ, որը խիստ դեմ է ՄԿՈՒ բյուջեի ավելացմանը՝ չնայած ԶԶ կրթության և գիտության ու ԶԶ էկոնոմիկայի նախարարությունների դրական մոտեցումների:

Դոնորների ներդրումը կարևոր դեր է խաղացել առանցքային նշանակության ռազմավարական փաստաթղթերի մշակման գործում, որոնք ընդունվել են տարբեր մակարդակներում բարեփոխումների գործընթացի մեկնարկից հետո: Այդ փաստաթղթերի շարքում, ի թիվս այլոց, կարելի է առանձնացնել հետևյալները՝

- «Զայաստանի Զանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգը»՝ 2009-2011թթ. գործողությունների ծրագրի հետ մեկտեղ, որն ընդունվել է ԶԶ կառավարության կողմից 2008թ. դեկտեմբերին: Այն սահմանում է ՄԿՈՒ զարգացման հիմնական նպատակները, ռազմավարական մոտեցումները, գերակայությունները և ուղորտային քաղաքականության գլխավոր ուղղությունները.
- «Զայաստանում ցկյանս ուսումնառության հայեցակարգը», որը ԶԶ կառավարության կողմից ընդունվել է 2009թ. հոկտեմբերին: Այն սահմանում է Զայաստանում ցկյանս ուսումնառության սկզբունքներն ու հասկացությունները, ներկայացնում է այս ասպարեզում առկա հիմնական խնդիրներն ու հնարավոր լուծումները.
- «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ուղորտում սոցիալական գործընկերության հայեցակարգը», որը ԶԶ կառավարության կողմից ընդունվել է 2009թ. մայիսին: Փաստաթղթով նախատեսված է սոցիալական գործընկերության՝ հստակ սահմանված իրավասությունների շրջանակներ ունեցող չորս մակարդակ՝ ազգային, տարածաշրջանային, ուղորտային և ինստիտուցիոնալ.
- Փոխըմբռնման հուշագիր նախնական մասնագիտական (արհեստակցական) և միջին մասնագիտական կրթության ուղորտում համագործակցության մասին, որը 2009թ. ստորագրվել է ԿԳՆ-ի, Զայաստանի գործատուների հանրապետական միության և ԶԶ առևտրաարդյունաբերական պալատի կողմից: Փաստաթուղթը սահմանում է գործատուների միությունների մասնակցության բնագավառներն ու ուղիները Զայաստանում ՄԿՈՒ իրականացման և ՄԿՈՒ զարգացման գործում:

Այս ռազմավարությունների իրականացումը լուրջ մարտահրավեր է, և կարողությունների ձևավորումը պետք է կենտրոնանա այս խնդիրների վրա:

Հայաստանում ՄԿՈՒ բարեփոխումների՝ Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգում սահմանված կոնկրետ գերակայություններն են՝

- ՄԿՈՒ ֆինանսավորման օպտիմալացումը և ՄԿՈՒ կառավարման բարելավումը,
- Մասնագիտական կրթության և ուսուցման կարողութենամետ չափորոշիչների ներդրումը,
- ՄԿՈՒ համակարգի արդյունավետության բարձրացումը և կրթական (ուսումնառության) արդյունքների բարելավումը,
- Որակի մոնիթորինգի մեխանիզմների արդիականացումը,
- Սոցիալական գործընկերության հզորացումն ու ինստիտուցիոնալացումը:

Հայեցակարգով սահմանված գերակայությունները հիմք են ծառայել ԵՄ բյուջետային և այլ դոնորների աջակցությունը պլանավորելու համար, և բոլոր բնագավառներում գրանցվել է զգալի առաջընթաց: Սակայն վերջին 20 տարիների ընթացքում համակարգն այնքան անտեսված է եղել մասնավորապես ենթակառուցվածքի տեսանկյունից, պայմաններն այնքան վատ են, որ գուցե խելամիտ կլիներ լուծարել ՄԿՈՒ հաստատությունները, իսկ ուսանողներին տեղափոխել միջնակարգ դպրոցների ավելի լավ կահավորված շենքեր: Այս առաջարկությունն արվել է ԵԿՀ ներկայացուցչի կողմից՝ Դիլիջանի պետական քոլեջ կատարած նրա այցելության ժամանակ: Այստեղ պայմաններն այնքան վատ են, որ ուսումնական միջավայր ստեղծելն անհնար է թվում: Միաժամանակ, տեղի միջնակարգ դպրոցի շենքը, որը լրիվ նոր է՝ ջեռուցվող մարզադահլիճով և այլն, կարող էր ընդունել քոլեջի ուսանողներին, սակայն դպրոցի տնօրինությունը նշվեց, որ դա խնդիր է, քանի որ միջնակարգ դպրոցը մարզային իշխանությունների ենթակայության տակ է, իսկ քոլեջը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության, և այդ երկու մարմինների համատեղ աշխատանքը քոլեջի ուսանողների համար այստեղ պատշաճ պայմաններ ստեղծելու ուղղությամբ գործնականում գրեթե անհնար է:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄԸ

2.1 Հայաստանի տնտեսական զարգացումը

Վերջին տասնամյակում Հայաստանի տնտեսությունը նախկին Խորհրդային Միության երկրների շարքում եղել է ամենաարագ զարգացողներից մեկը: Անցումային փուլի առաջին տարիների համեստ տնտեսական աճը 90-ականներին թափ առավ և շարունակվեց մինչև 2008թ. վերջը՝ արձանագրելով 10% տնտեսական աճ: Անկախությունից հետո Հայաստանի տնտեսությունը լրջագույն փորձության ենթարկվեց: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ երկրի ՀՆԱ-ն 1991 թվականի մակարդակին հնարավոր եղավ վերադարձնել միայն 2005թ.: Երկրի տնտեսության բոլոր ճյուղերի վրա ծանրագույն ազդեցություն թողած սաստիկ տնտեսական ճգնաժամը պայմանավորված էր ոչ միայն ԽՍՀՄ կազմալուծմամբ և տնտեսության՝ դրանից բխող վերափոխմամբ, այլև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կապակցությամբ տարածաշրջանում Ադրբեջանի հետ հակամարտությամբ, ինչպես նաև լուրջ երկրաշարժով: Հայաստանը դեպի ծով ելք չունեցող երկիր է, և Թուրքիայի ու Ադրբեջանի հետ երկրի սահմանները փակ են: Այս ամենը բացասական հետևանքներ ունի մարդկանց և ապրանքների տեղաշարժի, ինչպես և օտարերկրյա ներդրումների վրա, որոնց համար տեղական շուկան բավականաչափ գրավիչ չէ: Նախքան անկախությունը Հայաստանի տնտեսությունը հիմնված էր գերազանցապես արդյունաբերական հատվածի, այն է՝ քիմիական նյութերի, էլեկտրոնային արտադրանքի, մեքենաշինական, սննդի վերամշակման, սինթետիկ կաուչուկի և տեքստիլ արդյունաբերության վրա և մեծապես կախված էր արտերկրից ներկրվող ռեսուրսներից:

Նոր ճյուղերը, ինչպես օրինակ՝ թանկարժեք քարերի վերամշակումը և թանկարժեք զարդերի արտադրությունը, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները, ֆինանսները, ապահովագրությունը ու զբոսաշրջությունը փոխարինելու եկան տնտեսության ավանդական ճյուղերին:

Օտարերկրյա ուղիղ ներդրումները (ՕՈՒՆ) և դրամական փոխանցումները զգալիորեն նպաստում են Հայաստանի տնտեսության զարգացմանը և 2008թ. ՀՆԱ-ում դրանց մասնաբաժինը կազմել է 20%:

Տարիների ընթացքում գործարարությամբ զբաղվելու դյուրինության հետ կապված իրավիճակը, համաձայն Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի ամենամյա գնահատումների, բարելավվել է, և Հայաստանը 183 երկրների շարքում զբաղեցնում է 43-րդ տեղը:

ՀՆԱ-ում տարբեր ոլորտների տեսակարար կշռի իմաստով 2000-2009թթ. ժամանակահատվածում արձանագրվել է գյուղատնտեսության դերի նվազում (18%), որին համապատասխան աճել է ծառայությունների ոլորտի դերը (46%), իսկ արդյունաբերության ներդրումը մնացել է կայուն (36%):

2.2. Հայաստանի մարդկային կապիտալը

Համաշխարհային տնտեսական ֆորումի 2009թ. մրցունակության ցուցիչում (ինդեքսում) Հայաստանը 133 երկրների շարքում զբաղեցրել է 97-րդ հորիզոնականը (2007թ. այն 93-րդ տեղում էր), այսինքն՝ 2008թ. մակարդակի համեմատ փոփոխություն տեղի չի ունեցել: Մրցունակության դասակարգում տարիների շարունակ արձանագրվող անկումը վկայում է Հայաստանի տնտեսական աճը խթանող գործոնների անկայուն բնույթի մասին, որոնք ակնկալվում էր, որ պետք է ակնբախ դառնային այնպիսի արտաքին բացասական ցնցումների պայմաններում, ինչպիսին ներկայիս համաշխարհային տնտեսական ճգնաժամն է:

2009թ. Ֆորումի հարցման մասնակիցները ամենից հաճախ կոռուպցիան են մատնանշել որպես երկրի մրցունակությունն արգելակող թիվ մեկ խնդիր, որին հաջորդում են հարկային օրենսդրությունը, անարդյունավետ պետական բյուրոկրատիան, ֆինանսավորման անմատչելիությունը, տարադրամի կանոնակարգումը, ոչ պատշաճ ենթակառուցվածքները, անպատշաճ կրթություն և աշխատանքային թերի էթիկա ունեցող աշխատուժը, սղաճը, կառավարության և քաղաքականության անկայունությունը և զբաղվածության ոլորտի կաշկանդող կանոնակարգումը:

Որակավորումների տեսակետից ՄԿՈՒ առաջարկը ավանդականի սահմաններից դուրս չի եկել՝ չնայած այն բարեփոխմանը, որ դանդաղ տեմպերով մեկնարկել է դոնորների օժանդակությամբ: Թեպետ բուհերի շրջանավարտների ֆորմալ որակավորումը շատ հաճախ գերազանցում է այս կամ այն աշխատատեղի պրոֆիլի պահանջները, սակայն գործատուները նախապատվությունը տալիս են նրանց՝ բուհերում չսովորածների, մասնավորապես՝ նախնական և միջին ՄԿՈՒ հաստատությունների շրջանավարտների որակի անկման կամ արագ արձագանքելու կարողության բացակայության պատճառով: Իրականում բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում գործազրկության մակարդակը փոքր-ինչ ավելի ցածր է (28%), քան միջինը:


Սոցիալական գործընկերները մեծացրել են իրենց ներգրավվածությունը գործընթացում և մասնակցել են քաղաքական փաստաթղթերից շատերի մշակման աշխատանքներում: Նրանք նույնիսկ պատրաստակամություն են հայտնել ներդրումներ կատարելու ՄԿՈՒ համակարգում՝ պայմանով, որ պետական իշխանության մարմինների հետ մեկտեղ մասնակցություն ունենան որոշումների կայացման գործում:

Ստորև ներկայացվող Գծապատկեր 1-ը ցույց է տալիս, որ միջին ՄԿՈՒ համակարգում ընդունելության դիմանական կապված է՝ ոչ այնքան աշխատանք գտնելու տեսանկյունից, որքան հասարակության մեջ որոշակի համարում ունեցող դիպլոմ ստանալու հետ: Առողջապահությունն ու սպորտը զբաղեցնում են ամենաբարձր հորիզոնականները. դրանց հետևում են տնտեսագիտությունը, մանկավարժությունը, ապա՝ արվեստն ու կինեմատոգրաֆիան: Տնտեսական գործունեության հետ ավելի ամուր կապ ունեցող ոլորտները, ինչպես օրինակ՝ շինարարությունն ու գյուղատնտեսությունը, չեն գրավում սովորողներին՝ չնայած այն հանգամանքին, որ հենց այս ոլորտներում շրջանավարտները աշխատանք գտնելու առավել մեծ հնարավորություն ունեն:

Մանկավարժական որակավորում ունեցող շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել նախադպրոցական հաստատություններում կամ հանրակրթական դպրոցների առաջինից երրորդ դասարաններում: Այնուամենայնիվ, 1999թ. համակարգի օպտիմալացումից հետո կրճատումների

ենթարկված ուսուցիչների մեծ թվի պատճառով գերիշխում է (հատկապես քաղաքներում) բուհական կրթություն ունեցող ուսուցիչներին աշխատանքի վերցնելու միտումը: Գյուղական վայրերում աշխատող ուսուցիչների շրջանում դժվարին սոցիալական պայմանների առկայության պատճառով հնարավոր է գտնել ՄԿՈՒ համակարգի շրջանավարտների:

Գծապատկեր 1. Միջին ՄԿՈՒ համակարգում սովորողների թիվը (տոկոսային արտահայտությամբ) 2008-2009 ուսումնական տարում



Հասարակության կողմից որոշ ՄԿՈՒ մասնագիտությունների ընդունված լինելու մասին՝ իրական կյանքից վերցված պատմություններ ԵԿՀ-ին ներկայացվել են 2007թ.՝ Երևանի պետական բազային բժշկական քոլեջ կատարած այցի ընթացքում: Հայաստանի 12 բժշկական քոլեջների շարքում սա լավագույն բժշկական ուսումնական հաստատությունն է: 2007թ. այն ուներ 3700 ուսանող և ուսուցում էր իրականացնում հետևյալ մասնագիտությունների գծով՝ քույրական գործ, մանկաբարձություն, դեղագործություն և ատամնատեխնիկա: Դիպլոմ ստանալու համար սովորողներից պահանջվում է 3 կամ 4 տարվա ուսումնառություն, և սա մեծապես կախված է նրանից՝ արդյոք նրանք ավարտել են հանրակրթական դպրոցի 8-րդ, 9-րդ և 10-րդ դասարանները նախքան բժշկական քոլեջ ընդունվելը:

Սովորողների 95%-ը իգական սեռի ներկայացուցիչներ էին: ԵԿՀ-ի հետ հարցազրույցի ընթացքում քոլեջի տնօրենը հայտարարեց, որ միջինում իրենց շրջանավարտների 20%-ը կարողանում է աշխատանք գտնել ուսման ավարտից հետո մեկ տարվա ընթացքում, իսկ մնացած 80%-ը՝ հինգ տարվա ընթացքում: Նշվեց, որ անկախ այս համգամանքից ընտանիքները նախընտրում են, որ իրենց աղջիկներն ընդունվեն այդ քոլեջ՝ որպես հասարակության մեջ հեղինակության գործոն, և քանի որ նրանց գիտելիքները առողջապահության ոլորտում կարող են օգտակար լինել ընտանիքին ու համայնքին, որը թերևս հնարավոր կլիներ ապահովել նաև ինֆորմալ ուսուցման միջոցով: Ուսման վճարների 25%-ը տրամադրվում է պետության կողմից, իսկ մնացած 75%-ը՝ ընտանիքների կողմից:

2.3. Զբաղվածությունը Հայաստանում

2008թ. վիճակագրական տվյալները վկայում են այն մասին, որ չնայած շարունակական բնույթ կրող արագ տնտեսական աճին՝ Հայաստանում անփոփոխ կերպով պահպանվել է գործազրկության բարձր մակարդակ (29,8%՝ ըստ տնային տնտեսությունների հետազոտության տվյալների և ընդամենը 8%՝ ըստ պաշտոնապես գրանցված գործազուրկների թվի) և աշխատաշուկայում ներգրավվածություն և զբաղվածության ցածր մակարդակ (52,8%): Անկախ պետականության վերականգնումից ի վեր կանանց վիճակը զգալիորեն վատացել է՝ ինչպես զբաղվածության կորուստի (42,4%), այնպես էլ գործազրկության տեսանկյունից (36,4%), ինչին ավելացել է դժվարին տնտեսական պայմաններում և սոցիալական ոլորտների, ինչպես օրինակ՝ առողջապահության և կրթության համակարգի անկման

Ժամանակաշրջանում ընտանիքը պահելու ծանր բեռը: Ավելին, ինչպես նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում, կանանց դերը պետական կյանքում, հատկապես՝ բարձրաստիճան պաշտոններում նույնպես նվազել է:

Գործազրկության մակարդակն ամենաբարձրն է 16-24 տարեկան երիտասարդների շրջանում և կազմում է 57,4%

Հայաստանում ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը (սեփական գործ ունեցողներ և չգրանցված զբաղվածություն) չափազանց բարձր է, և գեկույցներից շատերում այդ հարցը քննարկելիս հիշատակվում է 30-38% թիվը (ընդհանուր զբաղվածության):

Ստորև ներկայացվող աղյուսակների տվյալները արտացոլում են 2000թ. դրությամբ զբաղվածության և գործազրկության մակարդակներն՝ ըստ կրթական մակարդակի և սեռի՝ 15-64 տարիքային խմբերում: Հարկ է նշել, որ բարձրագույն կրթության առաջին փուլը (ISCED 5) ներառում է միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի սովորողներին: Աղյուսակները ցույց են տալիս, որ զբաղվածության տեսանկյունից բուհերի շրջանավարտների դիրքերն առավել ամուր են՝ ՄԿՈՒ որակավորումներ ունեցող շրջանավարտների համեմատ, ինչով էլ բացատրում է ՄԿՈՒ համակարգի սակավ գրավչությունը:

Աղյուսակ 1. Զբաղվածության մակարդակն՝ ըստ կրթության մակարդակի և սեռի՝ 15-ից 64 տարեկանների շրջանում

Կրթական մակարդակներ (ISCED)	2008		
	Ամբողջը	Արական	Իգական
Առանց կրթության	19.2	26.6	3.0
Նախադպրոցական (ISCED 0)	40.4	70.7	18.3
Տարրական (ISCED 1)	16.7	18.3	15.4
Հիմնական ընդհանուր (ISCED 2)	35.8	44.9	25.8
Միջնակարգ ընդհանուր (ISCED 3) ²	53.4	66.6	41.6
<i>Միջնակարգ (ISCED 3) հանրակրթություն</i>	52.7	65.5	41.5
<i>Միջնակարգ (ISCED 3) ՄԿՈՒ</i>	61.7	78.0	42.5
Բարձրագույն կրթության առաջին աստիճան (ISCED 5)*	57.7	74.5	47.3
Բարձրագույն կրթության երկրորդ աստիճան (ISCED 6)	89.7	100.0	79.6
Բոլոր մակարդակները	52.8	66.0	42.4
<i>Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն</i>			

Աղյուսակ 2. Գործազրկության մակարդակն՝ ըստ կրթական մակարդակի

Կրթական մակարդակներ (ISCED)	2008		
	Ամբողջը	Արական	Իգական
Առանց կրթության	28.6	22.1	72.7
Նախադպրոցական (ISCED 0)	26.7	28.8	20.0
Տարրական (ISCED 1)	26.0	23.6	28.2
Հիմնական ընդհանուր (ISCED 2)	29.8	26.8	35.0
Միջնակարգ ընդհանուր (ISCED 3) ²	30.8	24.1	38.6
<i>Միջնակարգ (ISCED 3) հանրակրթություն</i>	31.3	24.9	38.4
<i>Միջնակարգ (ISCED 3) ՄԿՈՒ</i>	25.6	16.0	40.3
Բարձրագույն կրթության առաջին աստիճան (ISCED 5)*	28.1	19.5	34.9
Բարձրագույն կրթության երկրորդ աստիճան (ISCED 6)	0.3	0	0.6
Բոլոր մակարդակները	29.4	22.4	36.4
<i>Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն</i>			

«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը պարբերաբար ուսումնասիրություններ է անցկացնում աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի վերաբերյալ, և ընդհանուր առմամբ արդյունքն այն է, որ գործատուների շրջանում պահանջարկ վայելող որակավորումների և աշխատանք որոնող անձանց պրոֆիլների միջև գոյություն ունի անհամապատասխանություն:

85,000 պաշտոնապես գրանցված գործազուրկների վերաբերյալ ԶՊԾԳ կողմից 2009թ. կատարված վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ նրանց շուրջ 50%-ն ունի ցածր կամ անհստակ որակավորում, իսկ ամենաբարձր պահանջարկը վայելում են վաճառողները, եռակցողները, վարորդները, խոհարարները և մետաղագործները:

Ամփոփելով կարելի է նշել, որ Հայաստանը բնական պաշարների տեսանկյունից աղքատ երկիր է, որը համեմատաբար մեկուսացված է հարևան հիմնական շուկաներից: Երկրի կրթված և ձեռնարկատիրական ջիղ ունեցող աշխատուժը և պոտենցիալ աջակցությունը Սփյուռքից սովորաբար դիտվում են որպես Հայաստանի հիմնական մրցակցային առավելությունները: Սակայն շարունակվող ճգնաժամը ցույց է տվել, որ անցած տարիներին տնտեսության ապաքինումը հարակայունության տեսակետից թույլ է եղել և որ անհրաժեշտ է որոշարկել ու զարգացնել տնտեսության որոշակի ճյուղեր, որոնք շարժիչ ուժեր կդառնան ու ներդրումների միջոցով օժանդակել դրանք, այդ թվում՝ մարդկային ռեսուրսների զարգացումը անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ ձևավորելու նպատակով: Սփյուռքը կարևոր դերակատարում է ունեցել Հայաստանի տնտեսությունը զարգացնելու, ադամանդների մշակման, զբոսաշրջության, ՏՏ և բարձր տեխնոլոգիաների շուկա ստեղծելու գործում, և սա ցույց է տալիս, որ աճը պայմանավորված է հիմնականում նոր մուտքերով (տեղական և արտասահմանյան), այլ ոչ սեփականաշնորհված պետական ձեռնարկությունների գործունեությամբ:

Մասնավորապես՝ հմտությունների նկատմամբ պահանջարկը ձևավորող կարևորագույն մարտահրավերներն են՝ (i) տնտեսության շարունակվող վերափոխումը, (ii) կրթության մակարդակի և էթիկայի իմաստով որակյալ աշխատուժ ապահովելու անհրաժեշտությունը, (iii) աշխատաշուկայում պահանջարկի և առաջարկի միջև կապը բարելավելու անհրաժեշտությունը, (iv) նոր հմտությունների, ինչպես և տնտեսական զարգացումը խթանելու հետ կապված մարտահրավերներից բխող հմտությունների ակնկալվող կարիքների նկատմամբ պահանջարկը բավարարելու անհրաժեշտությունը:

3. ԱՐՏԱՔԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ. ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԽՐԱՆՈՒՄՈՒՄԸ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՅԱՆՁԱՐԿԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄԸ

3.1. Տարածաշրջանային զարգացման անհամաչափությունը

Հայաստանն ունի 10 մարզ, որոնք զգալիորեն տարբերվում են միմյանցից տնտեսական զարգացման, աղքատության, գործազրկության և խոցելի խմբերի տեսանկյունից:

ԱՎԾ-ի կողմից 2004-2005թթ. իրականացված տնային տնտեսությունների միասնական ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ միջինում աղքատության ազգային մակարդակը կազմում է 29.8%, ըստ որում այդ ցուցանիշն ամենաբարձրը Շիրակի մարզում է (42,5), իսկ ամենացածրը՝ Վայոց ձորի մարզում:

Հայաստանը պահպանել է կրթության տարբեր ճյուղերում ընդգրկվածության բարձր ցուցանիշներ, բացառությամբ նախադպրոցական կրթության, որը ցածր է հատկապես գյուղական շրջաններում: Պաշտոնական տվյալների համաձայն՝ 2008-2009 ուսումնական տարում կրթության տարրական մակարդակում ընդունելությունը կազմել է 95,5%, հիմնական ընդհանուր կրթական ծրագրերում՝ 93,5% և 81,9% միջնակարգ ընդհանուր կրթական ծրագրում:

Չնայած այն հանգամանքին, որ ավագ դպրոցում ընդունելությունը բարելավվել է (2002թ. այն կազմել է 74%), այդուհանդերձ տարրական կրթությունից հետո դուրս մնացողների մասնաբաժինը բավականին

բարձր է մնում, հատկապես աղքատ ընտանիքների զավակների շրջանում: 2008-2009 ուսումնական տարում դուրս մնացողների թվում տղաների մասնաբաժինը կազմել է 60,2%:

Անարդարության հիմնախնդիրը շատ արդիական է հատկապես կրթության որակի տեսանկյունից, որն ավելի ցածր է գյուղական ու թույլ զարգացած շրջաններում, որոնք դասավանդման օրերի քանակով ետ են մնում: ՄԿՈՒ ուսումնարանների/քոլեջների մեծ մասը վերջին 20 տարիների ընթացքում զուրկ են եղել ջեռուցման համակարգից, ուստի ստիպված են դասերը դադարեցնել տարվա ամենացուրտ եղանակին՝ դեկտեմբերից փետրվար ընկած ժամանակահատվածում:

Ջարգացման այս անհամաչափության պատճառով ներքին միգրացիան մեծապես նպաստել է քաղաքային շրջանների բնակչության ավելացմանը, հատկապես՝ Երևանում՝ գյուղական շրջաններում թողնելով տարեցներին և առավել խոցելի խմբերին, այդ թվում՝ գործազուրկ կանանց, ովքեր զուրկ են ժամանակին համահունչ հմտություններից և միայնակ են մեծացնում իրենց զավակներին:

Գյուղական և քաղաքային շրջանների, ինչպես և մարզերի միջև առկա տնտեսական անջրպետը հմտությունների նկատմամբ պահանջարկ ձևավորող ամենաապշեցուցիչ սոցիալական մարտահրավերների թվում առաջին տեղ է զբաղեցնում: Երկրորդը կրթության որակն ու արժեքն է՝ որպես լծակ սոցիալական տեղաշարժերի/շարժունության համար՝ հանրակրթության և բարձրագույն կրթության մատչելիության միջոցով: ՄԿՈՒ շրջանավարտներից կպահանջվի մասնավոր կրկնուսույցների մոտ պարապել բուհական ընդունելության քննությունները հաղթահարելու համար, ինչը լուրջ ֆինանսական հետևանքներ կարող է ունենալ ընտանիքների համար՝ մեկ անգամ ևս ցցուն դարձնելով համակարգի անարդարությունը և այն փաստը, որ ՄԿՈՒ-ն ներդրում է կատարում հասարակության տնտեսական ու սոցիալական համախմբման գործում:

3.2. Ժողովրդագրություն

Հմտությունների նկատմամբ պահանջարկ ձևավորող երրորդ էական սոցիալական մարտահրավերը կապված է ժողովրդագրական միտման և աշխատուժի ակնկալվող կրճատման հետ, ինչը բնակչության ծերացման ազդեցության, ծնելիության մակարդակի անկման և արտագաղթի հետևանք է: 1988թ. երկրաշարժի զոհերի մեծ թիվը և տնտեսական կապերի՝ Խորհրդային Միության փլուզմանը անմիջապես հաջորդած խզումը նպաստեցին Հայաստանի ժողովրդագրական աճի և միգրացիայի մակարդակի փոփոխություններին:

Ըստ ժողովրդագրական տեսության, 2008-ից 2050թթ. ընկած ժամանակահատվածում բնակչության կառուցվածքը նշանակալից փոփոխությունների է ենթարկվելու: Կանխատեսվում է, որ տեսության ժամանակահատվածում աշխատանքային տարիքի բնակչության թիվը կրճատվելու է շուրջ 8%-ով, իսկ աշխատանքային տարիքից մեծ բնակչության թիվն ավելանալու է գրեթե 8.5%-ով: Սակայն կրթության համակարգի վրա ժողովրդագրական միտումների ազդեցության վերաբերյալ որևէ հետազոտություն դեռևս չի իրականացվել:

3.3. Միգրացիա

Տնային տնտեսությունների՝ ազգային վիճակագրական ծառայության կողմից 1998թ.-ից պարբերաբար անցկացվող հարցումների համաձայն, տնային տնտեսությունների 6-10%-ը (նվազման միտումով) նշում է, որ ընտանիքի անդամներ ունեն, ովքեր ժամանակավորապես հանրապետությունից դուրս են գտնվում՝ արտերկրում աշխատելու նպատակով, թեև այս միտումը նվազում է: Գրեթե նույն թվեր են արձանագրվել միգրացիայի՝ 2007թ. ԱՎԾ-ի կողմից իրականացված հետազոտության արդյունքում: Ըստ այդ հետազոտության, 2007թ. դրությամբ երկրում մշտապես ապրող բնակչության շուրջ 6%-ը արտագաղթել է, որոնցից գրեթե 85%-ը հայտնել են, որ լքում են երկիրը արտագնա աշխատանքի համար: 2007թ. միգրացիայի հետազոտության տվյալներով, միջազգային միգրանտների հիմնական նպատակակետը Ռուսաստանն էր (76.4%), որին հետևում էին ԵՄ-ն՝ 9.8% և ԱՄՆ-ը՝ 4.8 %:

Բնակչության տեղաշարժի ավելի բարձր մակարդակն, ընդհանուր առմամբ, դրական երևույթ է, քանի որ թույլ է տալիս որոշ չափով մեղմել տնտեսական և սոցիալական ցնցումների հետևանքները: Երբ խոսքը գնում է տնտեսական անկման ժամանակահատվածներում աշխատանքային միգրացիայի մասին, ապա հարկ է նշել, որ այն կարող է նպաստել գործազրկության նվազեցմանը, մասնավոր տրանսֆերտների գոյացմանը, հետևաբար նաև՝ աղքատության կրճատմանը: Այնուամենայնիվ, կան նաև բացասական երևույթներ, քանի որ բնակչության վիթխարի զուտ արտահոսքը կարող է զգալիորեն նվազեցնել երկրի տնտեսական ներուժը, հատկապես եթե երկրից հեռացողներն ունեն կրթական ավելի բարձր մակարդակ և հմտություններ. խոսքն, այսպես կոչված, «ուղեղների արտահոսքի» մասին է:

2011թ. ԵՄ-ն և Հայաստանը կսկսեն քննարկումներ «Շարժունության գործընկերության» շուրջ՝ Հայաստանի և ԵՄ-ի միջև օրինական տեղաշարժը խթանելու նպատակով: Գործընկերության հիմնական խնդիրները ներկայացվում են ստորև (ի թիվս այլոց, դրանց շարքում է նաև հմտությունների ճանաչումը/ձեռքբերումը).

1. նպաստել ԵՄ-ից կամավոր կամ հարկադրաբար հայրենիք վերադարձող հայաստանցիների սահուն վերաինտեգրմանը աշխատաշուկային և օգնել հայաստանցի միգրանտներին հնարավորինս արդյունավետ օգտագործել այն հմտություններն ու ռեսուրսները, որոնք ձեռք են բերել միգրացիայի ժամանակահատվածում՝ հօգուտ սեփական առաջխաղացման և Հայաստանի զարգացման:

2. ԵՄ արտագաղթել ցանկացող հայաստանցիներին խրախուսել օգտվել միգրացիայի օրինական ճանապարհներից և աջակցել նրանց իրենց հմտություններին համահունչ աշխատատեղեր գտնելու կամ առաջարկվող աշխատատեղերին համահունչ հմտություններ ձեռք բերելու գործում:

3.4. Մեծահասակների ուսումնառություն

Ինչպես նշվեց 1-ին գլխում, 2009թ. հոկտեմբերին ՀՀ կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետությունում ցկյանս ուսումնառության հայեցակարգը»: Այն սահմանում է Հայաստանում ՑՈւ սկզբունքներն ու հասկացությունները, նկարագրում է ոլորտում առկա հիմնական խնդիրները և առաջարկում է դրանց լուծման ուղիներ:

Հայաստանում ցկյանս ուսումնառության ոլորտում կատարվող ներդրումները չափազանց սահմանափակ են, և աղյուսակ 7-ում ներկայացված տվյալները մատնանշում են, որ ԶՊԾԳ-ի կազմակերպած ակտիվ զբաղվածության միջոցառումները 2007թ. կազմել են ՀՆԱ-ի 0,02%-ը:

2007թ. ԵՄ ՈՔԱԾ-ի շրջանակներում 2009թ. իրականացվել է ուսումնասիրություն՝ մեծահասակների ուսումնառության խրախուսմանը միտված Ուսուցման ազգային հիմնադրամ (ՈՒԱՀ) ստեղծելու նպատակահարմարությունը գնահատելու համար:

Ուսումնասիրությունը հիմնվել է գոյություն ունեցող փաստաթղթերի ուսումնասիրման և տեղական շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ սոցիալական գործընկերների, պետական հաստատությունների, ընկերությունների, զբաղվածության կենտրոնների, կրթություն իրականացնողների և այլ կողմերի հետ անցկացված հարցազրույցների վրա:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Հայաստանում վերապատրաստման դասընթացների տարեկան առաջարկի կառուցվածքը մոտավորապես հետևյալ տեսքն ունի՝

- զբաղվածության կենտրոններ՝ շուրջ 1300 գործազուրկ,
- կարճաժամկետ դասընթացներ քոլեջներում՝ տարեկան 1000 վերապատրաստվող,
- արհմիութենական կազմակերպություններ՝ տարեկան 1000 մարդ,
- ՀԿ-ներ՝ տարեկան 1000 վերապատրաստվող,
- խոշոր ձեռնարկություններ (օր.՝ ԱրմենՏել, Վիվա Սել, Գրանդ Քենդի)՝ յուրաքանչյուրը վարձում է տարեկան շուրջ 1000 մարդ,
- մեծահասակների կրթություն իրականացնող կազմակերպություններ՝ տարեկան 300 մարդ,

- միջազգային ծրագրեր ու նախագծեր՝ վերապատրաստման դասընթացների շարքում առաջին և երկրորդ տեղն են զբաղեցնում համակարգչային տեխնոլոգիաներն ու օտար լեզուները,
- մասնագիտական կողմնորոշման կենտրոն՝ շուրջ 1000 մարդ, մի քանի ժամ անվճար խորհրդատվություն:

Ուսումնասիրության արդյունքները ներկայացվում են ստորև՝

- Գրեթե բոլոր շահագրգիռ կողմերը, որոնց հետ խորհրդափոխանակություն է անցկացվել, կողմ են արտահայտվել կառավարությունից անկախ ՌԲԱՅ ստեղծմանը.
- Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում բոլոր շահագրգիռ կողմերը, ողջունելով հանդերձ ՌԲԱՅ հիմնելու գաղափարը, հոռետեսորեն են վերաբերել այն հարցին՝ արդյոք գործատուները պատրաստակամ կամ ի վիճակի կլինեն վճարումներ կատարել Հիմնադրամին՝ հաշվի առնելով առկա ծանր տնտեսական վիճակը (Տավուշի առևտրաարդյունաբերական պալատում հայտնել են, որ ստիպված են եղել կասեցնել անդամավճարները, քանի որ անդամները մուծումների համար միջոցներ չունեն).
- Շահագրգիռ կողմերի մեծամասնության կարծիքով, գործատուները ծանրակշիռ շարժառիթ կունենան ներդրումներ կատարելու ՌԲԱՅ-ում, եթե հնարավոր լինի ապացուցել, որ ՌԲԱՅ-ը կօգնի լուծել աշխատաշուկային պահանջվող հմտությունների հարցը և որ նրա ֆինանսավորումը կլինի թափանցիկ.
- Շահագրգիռ կողմերի զգալի մասի համոզմամբ, միջազգային դոնոր կազմակերպությունների դեպքում կարևոր է աջակցություն ցուցաբերել ՌԲԱՅ-ին կազմավորման սկզբնական փուլում.
- Շահագրգիռ կողմերի զգալի մասը կարծում է, որ ՌԲԱՅ-ի վարչական կառուցվածքն ու կազմը կարող է ձևավորվել ՄԿՈՒԶԱԽ-ի օրինակով.
- Շահագրգիռ կողմերի 30%-ի կարծիքով, շատ կարևոր է գործատուներին որոշակի հարկային արտոնություն տրամադրել, եթե ակնկալվում է նրանցից ներդրումներ ստանալ ՌԲԱՅ-ի համար.
- Շահագրգիռ կողմերի 30%-ի համոզմամբ, ՀՀ կառավարությանը շատ դժվար կլինի հարկային արտոնություն տրամադրել ՌԲԱՅ կատարվող ներդրումների համար:

Ուսումնասիրության եզրակացությունն այն է, որ Հայաստանում հիմնադրամի ձևավորման համար պայմաններ կան, և որ դրան կարելի է տալ հիմնադրամի իրավաբանական կարգավիճակ՝ հոգաբարձուների խորհրդի կողմից կառավարմամբ, ներդրումների և որոշումների կայացման լիազորությունների իմաստով եռակողմ հավասար ներկայացուցչությամբ:

ԶՊԾԳ-ն իր զբաղվածության տեղական ու տարածքային կենտրոնների միջոցով ծառայություններ է մատուցում ողջ երկրի տարածքում՝ ներառյալ գործազուրկների ուսուցումը: Սակայն բյուջետային ռեսուրսների սղության պատճառով իրականացվող ուսուցումները խիստ սահմանափակ են, թեև ԶՊԾԳ-ի պնդմամբ ուսուցում ստացածների 75%-ը կարող են աշխատանք գտնել:

Ամփոփելով նշենք, որ երբ խոսքը գնում է արդարության խրախուսման և մարդկային ռեսուրսների զարգացման նկատմամբ սոցիալական պահանջարկի բավարարման գործում ՄԿՈՒ դերի մասին, ապա կարող են առանձնացվել հետևյալ գերակայությունները՝ մարզերի միջև առկա տարբերությունները, ժողովրդագրությունը, միգրացիան և ցկյանս ուսումնառությունը:

4. ՄԿՈՒ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ. ՌԵՍՈՒՐՍՆԵՐ, ՈՐԱԿ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համակարգի արդյունավետության մեծացման նպատակով ՄԿՈՒ իրականացման հետևյալ տարրերը սահմանվել են որպես առաջնահերթ՝

- (i) ռեսուրսների ոչ բավարար մրբիլիզացում, բաշխում և օգտագործում.
- (ii) ՄԿՈՒ իրականացման ցածր որակ.
- (iii) թույլ կազմակերպական կառուցվածք և գործընկերային հարաբերություններ.

(iv) ոչ բավարար հնարավորություններ երիտասարդների և մեծահասակների համար՝ ցկյանս ուսումնառության, մասնագիտական կրթության և ուսուցման տեսակետից:

Ստորև ներկայացվում է հիշյալ տարրերից յուրաքանչյուրի վերլուծությունը.

(i) Ռեսուրսների մոբիլիզացում, բաշխում և օգտագործում

2006-2007թթ. հատկացումները կրթությանը կազմել են ՀՆԱ 2,8%-ը, որը տարածաշրջանի այլ երկրների համեմատությամբ բավական ցածր ցուցանիշ է:

Այնուամենայնիվ բյուջետային հատկացումներն արտացոլում են կառավարության շահագրգռվածությունը կրթության բնագավառում. ընդհանուր պետական ծախսերում (ԸՊԾ) կրթության բյուջեի մասնաբաժինը 7,9%-ից (1997թ.) աճել է մինչև 14% (2006թ.): Այդուհանդերձ, Հայաստանում ԸՊԾ-ն կազմում է ՀՆԱ-ի ընդամենը 18-19%, մինչդեռ ՏՀԶԿ երկրներում այդ ցուցանիշը միջինում 40% է:

Միջնակարգ ընդհանուր կրթությանն ուղղվող պետական ծախսերը վերջին տարիներին աճել են մասնագիտական և բարձրագույն կրթության հաշվին, և, ինչպես ստորև է ներկայացվում, այն աճել է՝ 72%-ից (2001թ.) հասնելով 79%-ի (2007թ.):

Աղյուսակ 3. Ծախսերը կրթության ոլորտում

	Ընդհանուր ծախսերի %-ը		
	2001	2004	2007
Տարի			
Ընդհանուր միջնակարգ	72%	77%	79%
Նախնական ՄԿՈՒ	1.5%	0.9%	1.7%
Միջին ՄԿՈՒ	3.6%	2.8%	2.6%
			4.3%

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, 2008

Հարկ է նշել նաև, որ՝

- Տարրական և միջնակարգ դպրոցում կրթությունն անվճար է.
- Նախնական ՄԿՈՒ-ն գերազանցապես անվճար է (2008-2009 ուսումնական տարում նախնական ՄԿՈՒ համակարգում սովորողների միայն 6,8%-ն է վճարել իրենց ուսման համար), մինչդեռ միջին ՄԿՈՒ-ն անվճար է սովորողների ընդամենը 25%-ի համար.
- Բարձրագույն կրթությունն անվճար է պետական համալսարանների ուսանողների միայն 21%-ի համար, իսկ եթե հաշվի առնենք, որ մասնավոր համալսարանների ուսանողների թիվը կազմում է շուրջ 25 հազար, ապա արդյունքում կստացվի, որ պետական ծախսերը միջինում կազմում են 15%:

Ինչպես ստորև ներկայացվող աղյուսակ 4-ում է նշված, ՄԿՈՒ համակարգում շրջանավարտների թիվը բավականին բարձր է, հատկապես՝ միջին ՄԿՈՒ համակարգում սովորող աղջիկների դեպքում:

Աղյուսակ 4. 2008-2009 ուս. տարում շրջանավարտների ընդհանուր թիվը՝ ըստ ISCED մակարդակների

Կրթական մակարդակ	1999/2000		
	Ամբողջը	Արական	Իգական
Տարրական (ISCED 1)	80.6	80.8	80.4
Հիմնական (ISCED 2) Ամբողջը	96.5	96.2	96.8
<i>Հիմնական (ISCED 2) Ընդհանուր</i>	89.6	88.9	90.3
<i>Հիմնական (ISCED 2) ՄԿՈՒ</i>			
Վերին միջնակարգ (ISCED 3) Ամբողջը			
<i>Վերին միջնակարգ (ISCED 3) Ընդհանուր</i>	91.1	88.6	93.6
<i>Վերին միջնակարգ (ISCED 3) ՄԿՈՒ</i>	111.1	98.7	142.2
Բարձրագույն կրթության առաջին աստիճան (ISCED 5) Ամբողջը			
<i>Բարձրագույն կրթության առաջին աստիճան (ISCED 5)-1 Ընդհանուր</i>	94.7	80.7	108.1
<i>Բարձրագույն կրթության առաջին աստիճան (ISCED 5)-2 ՄԿՈՒ</i>	92	61.2%	119.4%
<i>Բարձրագույն կրթության առաջին աստիճան (ISCED 5) ՄԿՈՒ</i>	73.7	57.2	83.6
Բարձրագույն կրթության երկրորդ աստիճան (ISCED 6)	95.7	113.1	69.7

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎԾ)

(ii) ՄԿՈՒ որակը

Ինչ վերաբերում է ՄԿՈՒ որակին, ապա, ինչպես արդեն ասվել է, այն բավականին ցածր է մի շարք պատճառներով, որոնք են՝

- անբավարար վիճակում գտնվող շենքային պայմանները, որոնցում վերջին 20 տարվա ընթացքում որևէ կապիտալ ներդրում չի կատարվել և որտեղ բացակայում են հասարակական անվտանգության մեխանիզմներ, պատշաճ սանիտարահիգիենիկ պայմաններ և սպորտային հարմարություններ.
- պետական ռեսուրսների փոքր հատկացումներ և սահմանափակ մասնավոր ռեսուրսներ՝ հիմնված ուսման վճարների վրա.
- մասնավոր հատվածի կողմից ներդրումների բացակայություն՝ համապատասխան խթանիչ օրենսդրություն չլինելու հետևանքով.
- դասավանդման ցածր որակ՝ դասավանդողների անբավարար շահադրժան հետևանքով.
- հնացած ուսումնական ծրագրեր՝ նորարարություն և արդիականացում իրականացնելու անբավարար շահագրգռվածության հետևանքով.
- մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվության բացակայություն՝ կրթության աշխարհի և աշխատանքի աշխարհի միջև երկխոսության և հաղորդակցության անբավարար լինելու հետևանքով:

Հայաստանի ՄԿՈՒ համակարգում չկա ուսումնական հաստատությունների կամ դրանց աշխատակազմի առանձին անդամների կատարողականը (արդյունավետությունը) գնահատելու որևէ մեխանիզմ: Ավելին, ամբողջական ՄԿՈՒ համակարգի գնահատման որևէ եղանակ նույնպես չկա: Բոլորովին վերջերս հիմնադրված Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը², որը պատասխանատու է ինչպես բարձրագույն, այնպես էլ մասնագիտական կրթության համար, առաջին քայլերն է ձեռնարկում որակի գնահատման չափորոշիչների և չափանիշների մշակման ուղղությամբ: Փաստորեն մոտ ապագայում նմանօրինակ համակարգի ներդրում կամ կիրառում պետք չէ ակնկալել:

Դասավանդողները կարևոր ներդրում ունեն կրթության որակի մեջ յուրաքանչյուր երկրում: Սակայն Հայաստանում նրանք իշխանությունների կողմից բավարար աջակցություն չեն ստանում:

2008/2009-ին աշակերտ-ուսուցիչ հարաբերությունը (միջինը կրթության բոլոր մակարդակների համար) բավական ցածր է եղել՝ 9,7: Այս ցուցանիշը սկսած գրեթե անփոփոխ է մնացել 1990-ականների վերջից: Միաժամանակ, ինչպես երևում է ստորև բերված աղյուսակում, դասավանդողների աշխատավարձը միջին ազգային աշխատավարձին ցածր է, ինչը հանգեցնում է այս մասնագիտության ցածր գրավչության և դասավանդողների շահադրժվածության ցածր մակարդակի: Հայաստանի իշխանությունները պետք է զբաղվեն այս խնդրով՝ վերլուծելով կարիքները և մշակելով դասավանդման որակի բարելավմանն ուղղված ռազմավարություն, որը կներառի դասավանդողների հավաքագրման, մասնագիտական զարգացման և վարձատրման քաղաքականության հարցերը:

Աղյուսակ 5. Դասավանդողների աշխատավարձերը 2008թ.

Կրթական մակարդակ (ISCED)	Երկրի միջին աշխատավարձը	Դասավանդողների միջին աշխատավարձը՝ որպես երկրի միջին աշխատավարձի %	
		25.000	28,60
Նախադպրոցական (ISCED 0)	87.406	89.607	102,52
Տարրական (ISCED 1)		48.107	55,04
Հիմնական ընդհանուր (ISCED 2)		29.437	33,68
Միջնակարգ ընդհանուր (ISCED 3)		80.189	91,74
Հետմիջնակարգ, ոչ բարձրագույն (ISCED 4)			
Բարձրագույն կրթության առաջին աստիճան (ISCED 5)			
Բարձրագույն կրթության երկրորդ աստիճան (ISCED 6)			
Ամբողջը	87406	80.189	91,74

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎԾ)

² Հիմնադրվել է Բոլոնյայի գործընթացի շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորությունների համաձայն:

Կատարողականի/արդյունավետության գնահատման գործիքի դերում որոշ չափով կարող է հանդես գալ Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (ՄԺԾԾ), որը 2003թ. ի վեր Հայաստանի Կառավարության կողմից տարեկան բյուջեի նախապատրաստման ցիկլի անբաժան մասն է կազմել՝ որպես ծրագրային բյուջետավորման մեխանիզմ: Այնուամենայնիվ, կատարողականի չափման շրջանակը, որպես այդպիսին, առայժմ Հայաստանի ծրագրային բյուջետավորման կառուցվածքում ներդրված չէ: Այս ուղղությամբ կարողությունների ամրապնդման գործընթացը շարունակվում է:

ՄԿՈՒ համակարգի արդյունավետության և որակի բարձրացման համար ֆինանսական կամ որևէ այլ խթանող մեխանիզմներ չեն օգտագործվում:

Աղյուսակ 6. Մեկ աշակերտի հաշվով կատարվող ծախսը

Ուս. տարի	Մեկ սովորողի հաշվով կատարվող ծախսը			Պետական ծախսերը ISCED 3 մակարդակում		
	Միջնակարգ (ISCED 3) Ամբողջը	Միջնակարգ (ISCED 3) Ընդհանուր	Միջնակարգ (ISCED 3) ՄԿՈՒ	Ավագ միջնակարգ 3 (ISCED 3) Ամբողջը	Ավագ միջնակարգ (ISCED 3) Ընդհանուր	Ավագ միջնակարգ (ISCED 3) ՄԿՈՒ
1999/2000	10814.8	28873.5	75299.2	3.3	2.9	0.5
2004/2005	81146.5	75433.4	438113.9	7.9	7.2	0.7
2005/2006	91721.8	83545.4	631131.5	9.4	8.4	1.0
2006/2007	128880.4	118235.4	717439.3	13.1	11.8	1.3
2007/2008	167774.3	158922.1	350050.3	15.4	13.9	1.5
2008/2009	181158.5	170216.2	389779.9	16.7	14.9	1.8

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎԾ)

Քանի որ քոլեջները/ուսումնարանները պետական ոչ առևտրային կազմակերպությունների կարգավիճակ ունեն, նրանք ձեռնարկատիրական գործունեության ծավալելու իմաստով սահմանափակ հնարավորություններ ունեն, մինչդեռ այդօրինակ գործունեությունը լրացուցիչ ֆինանսական եկամուտների աղբյուր կարող է դառնալ նրանց համար: Ուսումնական հաստատությունների վերահսկիչների կարողությունները նույնպես սահմանափակ են: Միայն վերջերս (2009-2010թթ.) ՄԱԾԶ-ի ՄԿՈՒ ծրագրի աջակցությամբ մշակվել է ՄԿՈՒ հաստատությունների համար եկամուտների ստացման մոդելի մասին փաստաթղթի նախագիծ, որը ներկայումս քննարկման փուլում է:

Ինչպես երևում է Աղյուսակ 6-ում, ՄԿՈՒ համակարգում մեկ սովորողի հաշվով ծախսը 2008-2009 ուսումնական տարում գերազանցում է հանրակրթությանն ավելի քան երկու անգամ, թեև 2006-2007 ուսումնական տարվա համեմատ այն երկու անգամ կրճատվել է: Սա վերաբերում է միայն նախնական մասնագիտական կրթությանը, քանի որ միջին մասնագիտական կրթության դեպքում պետությունը վճարում է ծախսերի ընդամենը 25%-ը: Նախնական ՄԿՈՒ բարձր արժեքը համահունչ է ներկայիս միջազգային միտումներին. այդուհանդերձ, անհրաժեշտ է վերլուծություն կատարել դրա պատճառները վերհանելու և գնահատելու համար՝ հաշվի առնելով մասնավորապես դրա ցածր որակն ու բարձր անարդյունավետությունը:

Ավելին, քոլեջների/ուսումնարանների դասավանդողների կատարողականի մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ է ներդնել ֆինանսական կամ բարոյական խրախուսական մեխանիզմներ: Գոյություն չունի դասավանդողների աստիճանակարգման որևէ մեխանիզմ՝ նույնիսկ նրանց աշխատանքային փորձի տևողության կտրվածքով: Թեպետ հաստատության տնօրինությունն իրավունք ունի սահմանելու պարգևավճարներ/խրախուսական պարգևներ առավել որակյալ դասավանդողների համար, այդուհանդերձ գործնականում սա գրեթե անհնարին է հաստատության անբարենպաստ ֆինանսական դրության պատճառով:

(iii) Թույլ կազմակերպական կառուցվածք և գործընկերային հարաբերություններ

Մինչև վերջերս ՄԿՈՒ ոլորտի կառավարումը զգալիորեն կենտրոնացված էր ՀՀ ԿԳՆ ՄԿՈՒ վարչության ներքո, որը միշտ էլ աշխատուժի պակաս է զգացել և սահմանափակ ռեսուրսներ է ունեցել, ուստի զբաղված է եղել ոչ այնքան արդիականացման/նորարարության հարցերով, այլ առօրյա աշխատանքով:

2008թ. ի վեր կազմակերպական կառուցվածքը բարեփոխելու նպատակով հետևյալ քայլերն են նախաձեռնվել՝

- 2008թ. ստեղծվել է ՄԿՈՒ զարգացման ազգային խորհուրդ, որը եռակողմ մարմին է և զբաղվում է ՄԿՈՒ բարեփոխումների ուղղորդմամբ: Սոցիալական գործընկերները ներկայացված են Խորհրդում, որը պետք է տարեկան առնվազն երկու նիստ գումարի.
- ՀՀ կրթության և գիտության նախարարության ՄԿՈՒ վարչության կազմակերպական կառուցվածքը վերանայվել է և ստեղծվել է ՄԿՈՒ քաղաքականության մշակման, ռազմավարության և պլանավորման նոր բաժին (2008թ.).
- Կրթության ազգային ինստիտուտի շրջանակներում հիմնադրվել է ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն, որի առջև դրված են հետևյալ խնդիրները՝ վերանայել և բարեփոխել ուսումնական ծրագրերը, ուսումնական նյութերը և իրականացնել դասավանդողների վերապատրաստում.
- բոլոր ՄԿՈՒ հաստատություններում ձևավորվել են կառավարման խորհուրդներ՝ համաձայն 2005թ. ընդունված օրենքի: Խորհուրդների հիմնադրման համար պահանջվել է երեք տարի, քանի որ երկարատև քննարկումների առարկա էր դարձել ներկայացվածության հարցը: Թեպետ ընկերություններն ու տեղական իշխանությունները ներկայացված են խորհուրդներում, սակայն զբաղվածության տեղական կենտրոնների ներկայացուցիչներն ընդգրկված չեն, ինչը կարող է սահմանափակել զբաղվածության հնարավորությունների հետ կապերը:

Վերը նշված առաջընթացը հիրավի նշանակալի է, սակայն առաջմ վաղ է գնահատել դրա արդյունավետությունը: Կասկածից վեր է, որ գործընթացի շարունակականության ապահովման տեսակետից պահանջվելու է կարողությունների հետագա բարելավում:

(iv) Ոչ բավարար հնարավորությունների երիտասարդների և մեծահասակների համար՝ ցկյանս ուսումնառության, մասնագիտական կրթության և ուսուցման տեսակետից

Արդեն ասվել է, որ Հայաստանում ցկյանս ուսումնառությունը ճանաչվել է որպես հիմնական գերակայություն: Ուսուցման ազգային հիմնադրամի ձևավորումը կարող է լավ հնարավորություն ընձեռել, և ՄԿՈՒ ազգային խորհուրդը սատարում է այս գաղափարը ու փորձում արմատավորել այն առանցքային շահագրգիռ կողմերի շրջանում:

Աղյուսակ 7. Զբաղվածության ակտիվ միջոցառումներ (ԶԱՄ)՝ կազմակերպված ԶՊԾԳ-ի կողմից

	ԶԱՄ-ի վրա կատարված ծախսերը	ՀՆԱ ներկայիս արժեքը	Պետական ծախսերը	% ՀՆԱ-ից	% Պետական ծախսերից
2000	0	1031	210	0	0
2005	0.598	2243	418	0.03	0.14
2006	0.695	2656	481	0.03	0.14
2007	0.711	3149	635	0.02	0.11
2008	0.890	3646	811	0.02	0.11
2009	0.759	3166	929	0.02	0.08

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎԾ)

5. ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԵՆՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ

Վերևում արդեն նշվել է, որ ՄԿՈՒ համակարգում 2004թ. ի վեր ծավալվել է նորարարության ուշագրավ գործընթաց, որի շրջանակներում ընդունվել են բազմաթիվ ռազմավարական փաստաթղթեր, վերանայվել են ուսումնական ծրագրերը, նորացվել են սարքավորումները, վերանորոգվել են շենքերը, վերապատրաստվել են դասավանդողները և այլն: Մինչ օրս շարունակվող գործընթացին նշանակալից օժանդակություն է ցուցաբերվել դոնորների կողմից, քանի որ ՄԿՈՒ-ն միայն խոսքով է կարևորվում քաղաքական օրակարգում, բայց գործնական քայլերի չի վերածվում հիմնականում անհրաժեշտ միջոցների անբավարարության պատճառով: Ինչպես նշված է վերևում, դիմադրության է նկատվում (մասնավորապես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից) հատկապես միջին ՄԿՈՒ համակարգում անվճար ուսման տեղերի քանակի մեծացման գաղափարի նկատմամբ:

Մյուս կողմից՝ դոնորներն անկասկած օժանդակում են ՄԿՈՒ որակի բարելավմանը, սակայն միայն սահմանափակ թվով հաստատություններում, և հետագայում կառավարությունն է որոշելու՝ արդյոք տարածել բարեփոխումները մնացյալ հաստատություններում և դրա համար միջոցներ հատկացնել:

Հաստատությունների կառավարման խորհուրդները նորարարության լավ օրինակ են, թեև ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատության մակարդակով խորհուրդների գործառնական ազդեցության կանոնավոր մոնիթորինգի մեխանիզմ ներդրված չէ: Այդ ազդեցությունը կարող է մեծանալ, եթե հաստատություններին որոշումներ կայացնելու ավելի մեծ իրավասություններ տրվեն, օրինակ՝ եկամուտների գոյացման բնագավառում:

Նոր չափորոշիչները մշակվել են ոլորտային հանձնաժողովների մասնակցությամբ, որոնցում ներկայացված է նաև զբաղվածության ոլորտը, ինչը վկայում է գործընկերային հարաբերությունները խրախուսելու և աշխատանքի ու զբաղվածության ոլորտները շաղկապելու մտադրության մասին: Ուսումնական պլանների ազդեցությունը պետք է կանոնավոր կերպով ուսումնասիրվի ու բարելավվի: Պետք է ներդրվեն վերանայման մեխանիզմներ:

Հայաստանում ձեռներեցության զարգացման գործում ՄԿՈՒ համակարգի խաղացած դերի մասին տեղեկություններ չկան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- ETF ENPI 08-14 Black Sea Labour Market Reviews: Armenia Country Report, January 2010
- ETF: Labour market and VET: Challenges and prospects for countries engaging in the European Neighbourhood Policy – Southern Caucasus – Armenia, November 2006
- EU TACIS – VET Armenia, Final report 31 December 2006
- European Neighbourhood and Partnership Instrument: National Indicative Programme: 2007 – 2010
- ՀՀ կառավարություն. «Հայաստանում ցկյանս ուսումնառության հայեցակարգ, 2009
- ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2007թ. միգրացիայի ուսումնասիրություն
- ՀՀ կառավարություն. «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերության հայեցակարգ», 2009
- ՀՀ կառավարություն. «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգ», 2009
- ՀՀ կառավարություն. «ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարություն», 2004
- ՀՀ կառավարություն. «Կայուն զարգացման ծրագիր»
- ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն. «Սոցիալական վիճակը Հայաստանում, 2008» (նաև՝ 2002-2007)
- ՀՀ Նախագահ. «Ազգային անվտանգության ռազմավարություն»
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, «Զբաղվածության պետական ծառայություն. «Գործատուների ընտրանքային հետազոտություն», հոկտեմբեր 2008, Երևան
- The Economy Values Research Centre (World Economic Forum's Global Competitiveness Network) - The National Competitiveness Report, 2009, Armenia
- International Finance Corporation: Doing business in Armenia, 2009
- World Economic Forum: the 2009 report of Competitiveness of Armenia
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, «Զբաղվածության պետական ծառայություն. 2008թ. և 2009թ. տարեկան հաշվետվություններ
- World Bank: Role of the Diaspora in Transition Economies, Lev Freinkman, January 2009

ՀԱՎԵԼՎԱԾ. ՄԿՈՒ ՀԱՍՎԱՐԳԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏՎՅԱԼՆԵՐ

	1990	1995	2000	2003	2004	2005	2006	2007	2008
Նախադպրոցական կրթություն իրականացնող հաստատությունները	1192	1081	769	699	653	645	645	637	628
Երեխաների թիվը, հազ.	142.9	71.3	46.6	46.9	46.0	48.7	48.0	50.5	53.7
Նախադպրոցական հաստատություններում սովորող երեխաների մասնաբաժինը, %	30.8	17.6	17.2	19.1	20.0	21.8	21.8	23.3	28.9
քաղաքային վայրերում	S.բ.	S.բ.	27.6	27.9	27.4	29.7	29.0	31.1	39.3
գյուղական վայրերում	S.բ.	S.բ.	7.8	8.1	8.7	9.6	10.5	10.3	13.6
Ընդհանուր միջնակարգ կրթություն իրականացնող հաստատությունները, ներառյալ՝ մասնավորները	1397	1466	1458	1472	1434	1467	1467	1452	1475
Աշակերտների թիվը, հազ.	608.8	583.5	574.2	501.9	488.1	477.9	465.4	431.3	414.8
Աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը	9.4	10.6	9.8	10.8	11.3	11.2	10.8	10.3	10.0
քաղաքային վայրերում	S.բ.	S.բ.	S.բ.	S.բ.	S.բ.	S.բ.	S.բ.	S.բ.	S.բ.
գյուղական վայրերում	S.բ.	S.բ.	S.բ.	S.բ.	S.բ.	S.բ.	S.բ.	S.բ.	S.բ.
Մասնագիտական ուսուցում իրականացնող հաստատությունները	S.բ.	S.բ.	56	S.բ.	S.բ.	S.բ.	S.բ.	S.բ.	S.բ.
Սովորողների թիվը, հազ.	S.բ.	S.բ.	5.1	S.բ.	S.բ.	S.բ.	S.բ.	S.բ.	S.բ.
Միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունները, ներառյալ՝ մասնավորները	70	72	105	105	108	111	108	106	104
Սովորողների թիվը, հազ.	45.9	21.1	28.7	31.1	30.5	30.8	30.8	31.1	31.8
10,000 մարդու հաշվով	129	56	75.5	96.8	94.8	95.7	95.7	96.4	98.2
Միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատություններ ընդունվածների թիվը, հազ.	15.7	9.8	11.1	11.6	11.1	11.6	11.7	12.1	11.9
Միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատություններ ավարտածների թիվը, հազ.	19.1	6.9	8.1	8.5	9.4	8.7	8.4	8.2	8.6
10,000 մարդու հաշվով	54	18	21.3	26.5	29.2	27.0	26.1	25.3	26.6
Բարձրագույն կրթություն իրականացնող հաստատությունները, ներառյալ՝ մասնավորները	14	15	90	93	88	89	87	85	90
Ուսանողների թիվը, հազ.	68.4	39.4	60.7	77.9	85.1	97.8	105.8	112.2	114.4
10,000 մարդու հաշվով	193	105	159.6	242.5	264.7	303.7	328.4	347.5	353.3
Բարձրագույն կրթություն իրականացնող հաստատություններ ընդունվածների թիվը, հազ.	13.3	6.9	15.5	21.5	23.0	24.6	25.6	26.2	27.7
Բարձրագույն կրթություն իրականացնող հաստատություններ ավարտածների թիվը, հազ.	10.5	9.8	9.7	11.7	12.2	13.3	15.5	17.9	26.1
10,000 մարդու հաշվով	30	26	25.5	36.4	38.0	41.3	48.1	55.3	80.6

Աղբյուր՝ ՀՀ ԱԿԾ

2005/2006 ուսումնական տարում Հայաստանում մասնագիտական կրթության և ուսուցման համակարգը ներառել է՝

28 «նախնական ՄԿՈՒ» (արհեստագործական) հաստատություններ, որոնք առաջարկում են կրթություն շուրջ 20 մասնագիտությունների գծով (2-3 տարի տևողությամբ՝ հիմնական կամ 1 տարի տևողությամբ՝ միջնակարգ կրթությունից հետո, շնորհվում է վերին միջնակարգ մակարդակի արհեստագործական որակավորում)։

81 պետական միջնակարգ ՄԿՈՒ հաստատություններ (քոլեջներ), որոնք կոչվում են «միջին ՄԿՈՒ» հաստատություններ և առաջարկում են կրթություն շուրջ 120 մասնագիտությունների գծով (3-4 տարի տևողությամբ՝ հիմնական կամ 2 տարի տևողությամբ՝ միջնակարգ կրթությունից հետո, բարձրագույն կրթության մակարդակում)։

34 մասնավոր քոլեջներ, որոնք առաջարկում են կրթություն շուրջ 15 մասնագիտությունների գծով։

3 համալսարաններ, որոնք առաջարկում են միջին ՄԿՈՒ ծրագրեր (համալսարանական քոլեջներ)։

81 միջին ՄԿՈՒ քոլեջներից 54-ը կրթության և գիտության նախարարության ենթակայության ներքո են, մնացածը՝ գյուղատնտեսության (9), առողջապահության (12), մշակույթի (3), էներգետիկայի (1), սպորտի և երիտասարդության (2) նախարարությունների ենթակայության տակ։

Արհեստագործական մասնագիտություններով սովորողների բաշխվածությունն ըստ հիմնական մասնագիտությունների հետևյալ տեսքն ունի՝ ծառայություններ՝ 31%, տրանսպորտ՝ 21%, արվեստ և ոճավորում՝ 13%, շինարարություն՝ 5%, գյուղատնտեսություն՝ 5.6%, թեթև արդյունաբերություն՝ 3% և այլն։ Մասնագիտությունների բաշխվածությունը քոլեջներում հետևյալ պատկերն ունի՝ առողջապահություն և սպորտ՝ 31%, տնտեսագիտություն՝ 16%, մանկավարժություն՝ 14%, տրանսպորտ և կապ՝ 9% և այլն։

Միջնակարգ կրթության համակարգում սովորողների թիվը գրեթե անփոփոխ է մնացել 2000թ. հետո. փոքր-ինչ ավելացել է ընդհանուր միջնակարգ կրթության համակարգում սովորողների թիվը, իսկ բարձրագույն կրթության համակարգում սովորողների թիվը աճել է՝ 26.9%-ից (1999/2000 ուս. տ.) հասնելով 39.9% -ի (2008/2009 ուս. տ.)։ 2008/2009 ուսումնական տարվա տվյալներով, նախնական ՄԿՈՒ մակարդակում սովորողների թիվը կազմել է 5% , իսկ միջին ՄԿՈՒ մակարդակում՝ 21% :

Հայաստանում կրթության տարբեր մակարդակներն իրականացվում են կրթական տարբեր ծրագրերի միջոցով, որոնք սահմանում են կրթության բովանդակությունը կոնկրետ մակարդակի և բնագավառի համար, ուսումնառության պահանջվող ծավալը, հմտություններն ու կարողունակությունները։

«Կրթության մասին» օրենքը սահմանում է Հայաստանում իրականացվող հետևյալ կրթական ծրագրերը՝

- Հանրակրթություն (հիմնական և լրացուցիչ),
- Մասնագիտական կրթություն (հիմնական և լրացուցիչ)։

Մասնագիտական կրթական ծրագրերի նպատակն է պատրաստել համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ, ձևավորել նրանց հմտություններն ու կարողունակությունները և ընդլայնել նրանց գիտելիքները ընդհանուր և մասնագիտական կրթական մակարդակների հերթագայման միջոցով։

Մասնագիտական կրթական ծրագրերը հետևյալն են՝

- նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն,
- միջին մասնագիտական կրթություն,
- բարձրագույն մասնագիտական կրթություն,
- հետբուհական մասնագիտական կրթություն։

Առաջին երկու մակարդակները համարվում են ՄԿՈՒ (մոտավորապես համապատասխանում են Որակավորումների եվրոպական շրջանակի 2-4 մակարդակներին)։

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության նպատակն է ընդհանուր հիմնական կրթության հիմքի վրա սովորողներին նախապատրաստել այնպիսի աշխատանքների համար, որոնց համար պահանջվում է նախնական մասնագիտական որակավորում, ինչպիսին են, օրինակ, որակավորված բանվորների կամ արհեստագործների աշխատանքը: Կրթության այս մակարդակը հիմնականում ապահովվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններում՝ արհեստագործական քոլեջներում, և վերջում շնորհվում է «արհեստագործի» որակավորում:

Միջին մասնագիտական կրթության նպատակն է ընդհանուր (լրիվ) միջնակարգ կրթության բազայի վրա պատրաստել միջին մասնագիտական որակավորում ունեցող աշխատուժ, խորացնել սովորողների ընդհանուր և մասնագիտական կարողունակությունները: Միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում (ուսումնարաններում), որոնք կարող են իրականացնել նաև նախնական մասնագիտական կրթություն: Շրջանավարտներին շնորհվում է «մասնագետի» որակավորում: Միջին մասնագիտական կրթության գծով մի շարք մասնագիտություններ կարող են իրականացվել նաև ընդհանուր հիմնական կրթության հիման վրա:

Ընդհանուր հիմնական կրթության հիման վրա նախնական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունվելու դեպքում շրջանավարտները ստանում են նաև միջնակարգ կրթություն. այդ շրջանավարտների դիպլոմը ճանաչվում է նաև որպես ընդհանուր (լրիվ) միջնակարգ կրթության վկայական (ավարտական ատեստատ): Միևնույն ժամանակ ընդհանուր հիմնական կրթության հիման վրա նախնական մասնագիտական կրթության դեպքում թույլատրվում է ավելի սեղմ ժամկետներում որակավորում ստանալ՝ առանց ընդհանուր (լրիվ) միջնակարգ կրթություն ստանալու:

Մասնագիտությունների ցանկը, որոնցով կարելի է կազմակերպել մասնագիտական կրթության իրականացումը, ընդունվում է Կառավարության կողմից: Ներկայումս մասնագիտական քոլեջներում (ուսումնարաններում) դասավանդում է իրականացվում շուրջ 130 մասնագիտությունների գծով:

Ուսուցումը մասնագիտական ուսումնական հաստատություններում իրականացվում է ինչպես անվճար, այնպես էլ վճարովի հիմունքներով: Ուսման վճարովի համակարգը գործում է 1992թ. ի վեր: Անվճար ուսման տեղերի քանակը՝ ըստ մասնագիտությունների, յուրաքանչյուր տարի հաստատվում է կառավարության կողմից՝ հաշվի առնելով համապատասխան մասնագետների նկատմամբ պահանջարկը, ինչպես նաև մասնագիտական կրթության համար նախատեսված բյուջետային հատկացումների ծավալը: Նախարարությունները հաստատված տեղերը հատկացնում են իրենց ենթակայության ներքո գործող մասնագիտական քոլեջներին և սահմանում են վճարովի տեղերի քանակն այդ քոլեջներում:

Ընդունելությունը տեղի է ունենում մրցութային հիմունքներով: Անվճար տեղերի համար պահանջվում է ընդունելության քննություններ հանձնել երկուսից հինգ առարկաների գծով, իսկ վճարովի տեղերի համար մրցութն անցկացվում է ընդհանուր հիմնական կամ ընդհանուր (լրիվ) միջնակարգ կրթության ատեստատների գնահատականների հիման վրա: Առաջին և երկրորդ կարգի հաշմանդամները, մինչև 18 տարեկան ծնողազուրկները, զոհված ազատամարտիկների երեխաներն ու կանայք արտոնություններ ունեն ընդունելության ժամանակ. քննությունները բարեհաջող հանձնելու դեպքում նրանց ոչ մրցութային անվճար տեղեր են հատկացվում (եթե նման տեղեր նախատեսված են նրանց ընտրած մասնագիտության գծով):

Թեև Հայաստանում կրթության ոլորտում լիազորված պետական կառավարման մարմինը կրթության և գիտության նախարարությունն է, այդուհանդերձ, մի շարք այլ նախարարություններ (օրինակ՝ գյուղատնտեսության նախարարությունը, առողջապահության նախարարությունը, մշակույթի նախարարությունը և այլն), ինչպես նաև տարածքային կառավարման մարմինները (մարզպետարանները) իրենց ենթակայության տակ ունեն միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ: ԿԳՆ-ն մշակում և իրականացնում է կրթության ոլորտի ընդհանուր քաղաքականությունը, իսկ մյուս մարմինները իրագործում են իրենց ենթակայության ներքո գործող ուսումնական հաստատությունների ղեկավարումը և

մասնակցում են ԿԳՆ-ի լիազորությունների շրջանակի հետ կապված մի շարք աշխատանքների (օր.՝ չափորոշիչների մշակմանը):

Ուսումնական հաստատության կառավարումն իրականացվում է տնօրենի կողմից, որը մշակվում և աշխատանքից ազատվում է համապատասխան կառավարման մարմնի կողմից, իսկ կոլեգիալ կառավարումն իրականացվում է խորհուրդների կողմից (գործում են 2008թ.-ից), որոնք պատասխանատու են քոլեջի տնօրենի ընտրության, նրա աշխատանքի ընթացիկ վերահսկողության, հաստատության Ջարգացման ծրագրերի հաստատման, հաստատության շահույթի կառավարման ուղղության վերաբերյալ որոշումների կայացման և տարեկան բյուջեի ուսումնասիրման, մեկ սովորողի հաշվով ուսման վճարի սահմանման, ինչպես նաև ուսումնական ծրագրերի և առարկայական ծրագրերի քննարկման համար, ինչը նախկինում բացառապես քոլեջի տնօրենի լիազորությունների թվին էր պատկանում:

Հայաստանում մասնագիտական կրթության ոլորտը կարգավորող հիմնական իրավական շրջանակը ներառում է՝

- ՀՀ Սահմանադրությունը (2005թ.),
- «Կրթության մասին» օրենքը (1999թ.),
- «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքը (2005թ.):

Կրթության մասին օրենքը սահմանում է կրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնական սկզբունքները: Դրանք են՝

- կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապատվության, հայրենասիրության, օրինականության և բնապահպանական աշխարհայացքի դաստիարակությունը.
- կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ.
- կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը.
- միջազգային կրթական համակարգում ինտեգրացումը.
- ուսումնական հաստատությունների ողջամիտ ինքնավարությունը.
- պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում քաղաքացիների կրթություն ստանալու հնարավորությունների երաշխավորումը.
- ուսումնական հաստատությունների ու դրանց կողմից տրվող վկայականների իրավահավասար կարգավիճակի ապահովումը (ավարտական փաստաթղթեր):

ՄԿՈՒ մասին օրենքը կարգավորում է ՄԿՈՒ համակարգում ՀՀ պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպական-իրավական և ֆինանսատնտեսական հիմքերը, իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքներն ու պարտականությունները:

Օրենքով շրջանառության մեջ են դրվել մի շարք հասկացություններ, որոնք նորություն էին Հայաստանի համար: Դրանցից են սոցիալական գործընկերություն, կրեդիտներ, ուսանողական նպաստ հասկացությունները և այլն: ՄԿՈՒ բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները նույնպես նորովի են ներկայացված օրենքում՝

- ուսանողի և ունկնդրի մասնագիտական գիտելիքների և հմտությունների համապատասխանության ապահովումը տնտեսության և աշխատանքային շուկայի պահանջներին.
- արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի կառավարման թափանցիկությունն ու կոլեգիալությունը.

- մրցունակությունն ու հրապարակայնությունը.
- արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող սուբյեկտների իրավահավասարությունը.
- արհեստագործական և միջին մասնագիտական հաստատությունների ինքնավարությունը և վերահսկելիությունը.
- սոցիալական գործընկերների հետ համագործակցությունը.
- արհեստագործական և միջին մասնագիտական կրթության որակավորումների համապատասխանեցումը միջազգային չափանիշներին:

Կան նաև այլ օրենքներ, որոնք անմիջականորեն կապված են Հայաստանում ՄԿՈՒ ոլորտի կարգավորման հետ: Դրանց թվին են պատկանում՝


- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքը (2001թ.),
- «Լիցենզավորման մասին» օրենքը (2001թ.),
- «Բնակչության բնապահպանական կրթության մասին» օրենքը (2001թ.),
- «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքը (2002թ.),
- «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքը (2005թ.):

Հայաստանում ցկայանա ուսումնառության համակարգը ներառում է զանազան բաղադրիչներ, որոնց շարքում զգալի տեղ է զբաղեցնում ոչ ֆորմալ կրթությունը, որն իրականացվում է տարբեր ձևերով, ինչպիսիք են, օրինակ՝

- ուսուցման և վերապատրաստման դասընթացները, որոնք կազմակերպվում են տարբեր կազմակերպությունների կողմից իրենց աշխատակազմի անդամների համար,
- մասնագիտական և ոչ մասնագիտական ուսուցման դասընթացները, որոնք իրականացվում են ինչպես առևտրային, այնպես էլ շահույթ չհետապնդող կազմակերպությունների կողմից, այդ թվում՝ պետական ուսումնական հաստատությունների կողմից.
- տարաբնույթ նպատակային դասընթացները, որոնք իրագործվում են միջազգային կազմակերպությունների ու ծրագրերի կողմից, այդ թվում՝ բարեգործական նպատակներ հետապնդող կազմակերպությունների կողմից.
- նախապատրաստական զանազան դասընթացները (օր.՝ բուհական ընդունելության քննություններին նախապատրաստվելու համար նախատեսված դասընթացները), ներառյալ՝ մասնավոր կրկնուսույցների գործունեությունը, և այլն:

Ոչ ֆորմալ ուսումնառության հետ կապված գործունեությունը պետականորեն չի գրանցվում (պատճառը հիմնականում այն է, որ նման գործունեության համար լիցենզիա չի պահանջվում), ուստի համապատասխան վիճակագրություն գոյություն չունի: Այդուհանդերձ, որոշ փորձագետների հաշվարկներով, տասնյակ հազարավոր մարդիկ ներգրավված են այսօրինակ գործունեության մեջ: Բացի այդ, ոլորտը կարգավորող օրենսդրական բազա գրեթե գոյություն չունի:

Կրթության համակարգը Հայաստանում



26	XXI	Դիպլոմ	Ասպիրանտուրա կամ դրան հավասարագոր
25	XX	Դիպլոմ	բարձրագույն կրթության (մագիստրոսի աստիճան)
24	XIX	Դիպլոմ	բարձրագույն կրթության (դիպլոմավորված մասնագետ)
23	XVIII	Դիպլոմ	բարձրագույն կրթության (բակալավրի աստիճան)
22	XVII	Դիպլոմ	բարձրագույն կրթության (բակալավրի աստիճան)
21	XVI	Դիպլոմ	բարձրագույն կրթության (բակալավրի աստիճան)
20	XV	Դիպլոմ	բարձրագույն կրթության (բակալավրի աստիճան)
19	XIV	Դիպլոմ	միջին մասն. կրթության (որակ. մասնագետ)
18	XIII	Դիպլոմ	միջին մասն. կրթության (որակ. մասնագետ)
17	XII	Դիպլոմ	միջին մասն. կրթության <u>ավարտական ատեստատով</u> (որակ. մասնագետ)
16	XI	Դիպլոմ	միջին մասն. կրթության <u>ավարտական ատեստատով</u> (որակ. մասնագետ)
15	X	Դիպլոմ	միջին մասն. կրթության <u>ավարտական ատեստատով</u> (որակ. մասնագետ)
14	IX	Դիպլոմ	միջին մասն. կրթության <u>ավարտական ատեստատով</u> (որակ. մասնագետ)
13	VIII	Դիպլոմ	միջին մասն. կրթության <u>ավարտական ատեստատով</u> (որակ. մասնագետ)
12	VII	Դիպլոմ	միջին մասն. կրթության <u>ավարտական ատեստատով</u> (որակ. մասնագետ)
11	VI	Դիպլոմ	միջին մասն. կրթության <u>ավարտական ատեստատով</u> (որակ. մասնագետ)
10	V	Դիպլոմ	միջին մասն. կրթության <u>ավարտական ատեստատով</u> (որակ. մասնագետ)
9	IV	Դիպլոմ	միջին մասն. կրթության <u>ավարտական ատեստատով</u> (որակ. մասնագետ)
8	III	Դիպլոմ	միջին մասն. կրթության <u>ավարտական ատեստատով</u> (որակ. մասնագետ)
7	II	Դիպլոմ	միջին մասն. կրթության <u>ավարտական ատեստատով</u> (որակ. մասնագետ)
6	I	Դիպլոմ	միջին մասն. կրթության <u>ավարտական ատեստատով</u> (որակ. մասնագետ)
Տարիներ	Տարիներ	Վկայական	Ընդհանուր (լրիվ) միջնակարգ կրթության (ավարտ. ատեստատ)
Տարիներ	Տարիներ	Վկայական	Ընդհանուր հիմնական կրթության